891.99-192
9-27

2013

13188


ԶԱՆՋԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԵՐԳԵՐՈՒ
Գ. Գիրք
ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԿԸ ԲՈՎԱՆԴԱԿԷ
ԱԶԳԱՅԻՆ...
ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՍԻՐԱՅԻՆ...
ԿՐՕՆԱԿԱՆ....
ԴՊՐՈՑԱԿԱՆ...
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ..
ԲՈԼՈՐ ԵՐԳԵՐԸ
S. Brovsky

891.99-192
Գ-27
ԷԲ-2008
127229
54-2002

# ԳԱՆՁԱՐԱՆ
# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

## Գ. ԳԻՐՔ

## ՍԻՓԱՆԱՅ ՔԱՋԵՐ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ





ԷՖ-2002



Լօ՛, լօ՛, լօ՛, սեգ Սիփանայ սարի վերան,
Կտրիճներ ըշտապով գալիս են միանում.
Այնտեղ անմահ ոգիք՝ անյաղթ Սիփան լերան
Ձենք ու զրահի են ընթանում:
Ինչո՞ւ վառում են զինում,
Կատարն ի վեր ելնում անհամբեր.
Վառ արիւնն է նոցա քաջ սրտի մեջ եռում.
Սուրում, անցնում են ամպեր
Քան Սիփանայ սուր քամին,
Սըլանում են դէպի վար,
Դաշտի մեջ է թշնամին.
Նա է վառում նոցա արեան վրէժ անմոռաց,
Գազանաբար վատթար թշնամին
Հատու սուսերը հանել,
Հայ իշխանին է սպանել,
Այս է վառում քաջերին:

Հայ որեարն էլ ոտքի կանգնած,
Այժմ թշնամուն, մահու մարտի է կանչում.
Ու վրէ՛ժ, արեան վրէ՛ժ է նա պահանջում,
Ու թշնամին պարտըւած,
Թողնում, վազում, սարէ սար,
Յետ է մնում շատ աւար:
Արիւն թափեցին փոխանակ արեան,
Արիւն քամեց ամեհի սուսեր,
Սուրը յագեցաւ, յետ դըրին պատեան,
Ելնում են հիմա սեգ Սիփանն ի վեր:
Սեգ Սիփանայ կանաչ գագաթին,
Քաջերն անում են մեծ խնդում,
Եւ ամպերի թանձրութեան միջից
Հսկայ Սիփանայ սար թընդում.
—«Էլ մօտ չեն գայ մեզ թշնամիք,
Սուր տեսան մեր պողվատիկ:»



# ԴԻԼԲԱՐ ՋԱՆ

(ՔԱՌԱՁԱՅՆ ԵՐԿՍԵՌ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ)

Դ. ՂԱԶԱՐԵԱՆԻ










(Եղանակին շարունակութիւնը եւ երգին բառերը տեսնել յաջորդ էջին վրայ)







Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան,
Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան,
Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան,
Դիլբա՛ր ջան, ես սարէն կուգամ,
Ձեր բաղչին մտնեմ, դիլբա՛ր ջան,

Քեզի կը գտնեմ սիրո՛ւն ջան,
Ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն,
Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջա՛ն,
Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան:

## ԿՈՉ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ



Հայ երիտասարդք, շուտ շտապեցէք,
Րոպէն շատ թանկ է, յառաջ քալեցէք,
Օտարք հայերիս կ'ասեն վախկոտ են.
Յաղթութեան դրօշակ շուտով պարզեցէք:

Միթէ մենք քաջ Վարդանի ցեղից չե՞նք,
Մեկըս հազարի դէմ միշտ կը կռուենք,
Մի ժամանակ մենք շղթայուած էինք,
Հիմա ազատ ենք եւ ունինք շատ զէնք:

Օգնութեան հասան քաջ Խանն ու Մուրատ,
Ճիշդ հայու զաւակ, ծնունդ անարատ,
Մոկացի Գրիգոր եւ երկու Արշակ
Գնդակ թափում են կարկուտից արագ:

Քաջ Թումանեանցը, որսորդ Գէորգը
Կազմել, պատրաստել են իրենց խմբերը,
Դաշնակցութեան դրօշակի անից
Սարսափահար փախչում են քրդերը:

## ՁԻՆԱՐ ԵՍ

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.






# ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ(*)

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՊԷՐԷԹ 4 ԱՐԱՐ)

## ՍԵՒ ՍԵՒ ԱՉԵՐ ԳԵՂԵՑԻԿ

ՈՒԶԷԻՐ ՊԷԿ ՀԱՃԻՊԷԿՈՎԻ




Սեւ սեւ աչեր գեղեցիկ,
Ինձ մի աներ տարպետար,
Գիշեր ցերեկ այրւում եմ
Քո սիրուցը անդադար:

Մի՞թէ սիրածըդ ես եմ,
Ուրիշին էի կարծում,
Թէ որ այդպէս է, հոգի՛ ջան,
Ես էլ քեզի եմ սիրում:

Սեւ սեւ աչեր գեղեցիկ.
Ինձ մի աներ խելագար,
Գիշեր ցերեկ տանջըւում եմ
Քո սիրուցը անդադար:

Ինչո՞ւ համար մտածել,
Ի զուր տեղը տանջըւել,
Արի՛ մենք ամուսնանանք,
Ի՞նչ շահ որ այսպէս մնանք:

(*) «Արշին Մալ Ալան» եւ «Մաշտի Իբատ» օպերէտներու հեղինակը թէպէտ Ազէրպէյճանցի թուրք մըն է, սակայն հայ դերասանները ծայրէ ի ծայր փոխած են անոնց եղանակները, ճոխացնելով հայ ժողովրդական երգերով. այդ պատճառով ալ «Գանձարան»ի մէջ կարեւոր տեղ տուած ենք անոնց:

## ՁԻՆԱՐ ԵՍ

Ձինար ես, կեռանալ մի՛,
Եա՜ր, եա՜ր,
Մեր դըռնէն հեռանալ մի՛,
Եա՜ր, եա՜ր,
Եա՜ր, նանա՜յ, նա՜յ, նա՜յ,
Նա՜յ նա՜յ,
Նա՜յ, նա՜յ, նա՜յ, նա՜յ, նա՜յ:
Եա՜ր քո Աստուած կը սիրես,
Հեռու ես, մոռանալ մի՛:

Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներս շաղով թաց ա,
Ինձանից հեռացել ես,
Աչքերս լիքը լաց ա:

Էս գիշեր երազ տեսայ,
Հերկերս վարած տեսայ.
Ամո՛թ քեզի, ա՜յ տղայ,
Քո եարը տարած տեսայ:

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԷՋԸ

### Ի՞ՆՉ ՆՈՒԷՐ ՏԱՄ ՄԱՅՐԻԿԻՆ

Ա. ԲԺՇԿԵԱՆ




(1) ՏՂԱՆ
Աղւո՛րս, բախ ծառին,
Ի՞նչ նուէր տամ մայրիկին:
ԾԱՌԸ
Սա բաղեղն ա՛ռ
Դեռ մատղաշ,
Ձմեռ ամառ
Միշտ կանանչ:
ՏՂԱՆ
Ընդունէ, մայրիկս, (կրկ.)
Սա բաղեղը միշտ կանանչ:

(2) ՏՂԱՆ
Աղւո՛րս, բախ սարին;
Ի՞նչ նուէր տամ մայրիկին:
ՍԱՐԸ
Սա ցախերս առ
Սիրունիկ,
Բոց կուտան վառ
Գեղեցիկ:
ՏՂԱՆ
Ընդունէ, մայրիկս, (կրկ.)
Սա ցախերը գեղեցիկ:

(3) ՏՂԱՆ
Աղւո՛րս, բախ արտին,
Ի՞նչ նուէր տամ մայրիկին:
ԱՐՏԸ
Սա հասկերս առ
Ոսկեգոյն,
Ցորեն, հաճար
Լեփ լեցուն:
ՏՂԱՆ
Ընդունէ, մայրիկս, (կրկ.)
Սա հասկերը ոսկեգոյն:

(4) ՏՂԱՆ
Աղւո՛րս, բախ մարգին,
Ի՞նչ նուէր տամ մայրիկին:
ՄԱՐԳԸ
Սա ծաղիկն առ
Աննման,
Սիրուն գոհար
Մ՚է գարնան:
ՏՂԱՆ
Ընդունէ, մայրիկս, (կրկ.)
Սա ծաղիկը աննման:

(5) ՏՂԱՆ
Աղւո՛րս բախ ձորին,
Ի՞նչ նուէր տամ մայրիկին:
ՁՈՐԸ
Սա թուփս առ դուն
Ելակի,
Մայիս ամսուն
Կը ծաղկի:
ՏՂԱՆ
Ընդունէ, մայրիկս, (կրկ.)
Սա թուփն աղւոր ելակի:

(6) ՏՂԱՆ
Աղւո՛րս, բախ լճին,
Ի՞նչ նուէր տամ մայրիկին:
ԼԻՃԸ
Ալիքներս առ
Կապուտակ,
Մաքուր, պայծառ
Եւ յստակ:
ՏՂԱՆ
Ընդունէ, մայրիկս, (կրկ.)
Սա ալիքները յստակ:

(7) ՏՂԱՆ
Աղւո՛րս, բախ կրկին,
Բան մը բաւէ մայրիկին,
Բաղեղ, պտուղ
Եւ ծործոր,
Արտ, մարգ, լճակ,
Սար ու ձոր,
Ըսէ՛ք, տուր մայրիկին,
Ըսէ՛ք մայրիկիս,
Թէ իրենն է սիրտս, հոգիս:

ԾԱՆՕԹ.— Մէջտեղը սեղան մը պէտք է դնել վրան զետեղելով բաղեղ, ցախ, ցորեն, ծաղիկ, ելակի թուփ եւ գաւաթ մը ջուր: Աղջիկներէն մին կամ մանկապարտիզպանուհին սեղանին առջեւը կը նստի եւ մայր կ'ըլլայ. 6 տղայ կարգաւ սեղանին դիմաց կը կենան. Ա.ը կ'ըլլայ ծառ ու կը նուիրէ մայրիկին բաղեղ, Բ.ը սար՝ կը նուիրէ ցախեր, Գ.ը արտ՝ կը նուիրէ ցորեն, Դ.ը մարգ՝ կը նուիրէ ծաղիկ, Ե.ը ձոր՝ կը նուիրէ ելակ, Զ.ը լիճ՝ կը նուիրէ ջուր: Յետոյ վեց տղայք միաբան ծնրադիր կը նուիրեն մայրիկին իրենց սիրտը:



## ՊԸՃԻՆԿՕ

Խօսք՝ Տ. ՉԻԹՈՒՆԻԻ

Երաժշ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԻ




Արեւ ըլլամ՝ ծագի՛մ, մարի՛մ վերեւէդ,
Կամ շուք ըլլամ՝ անի՛մ, հասնի՛մ քեզի հետ.
Դէմքիդ մատաղ, ա՛յ սիրական,
Քայլերուդ հետ՝ ծաղկէ ծաղիկ վէտ ի վէտ:

Օ՜յօ՛յօ՛յօ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՜ պըճինկօ՛,
Օ՛յօ՛յօ՛յօ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՛ պըճինկօ՛:

Ես արեգակ՝ դու ես ծովը ծիրանի,
Հալինք լեցուինք իրար ծոցը հոլանի.
Հովը երգէ, ա՛յ սիրական,
Հազար լարով, հազար անգամ երանի:

Օ՛յօ՛յօ՛յօ՛յ պըճինկօ՜ պըճինկօ՛ պըճինկօ՛,
Օ՛յօ՛յօ՜յօ՛յ պըճինկօ՜ պըճինկօ՜ պըճինկօ՛:

Արո՞ւ թէ էգ, երկո՞ւ թէ մէկ մարմին ենք,
Արու եւ էգ ձագ ու թոռներ կը հանենք,
Մեր աշխարհի չորս ծագերուն,
Արեւի պէս բոց ու բարի կը շարենք:

Օ՛յօ՛յօ՛յօ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՜ պըճինկօ՛,
Օ՛յօ՛յօ՛յօ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՛ պըճինկօ՛:

## ՎԵՐԵԼՔ

Խօսք՝ Խ. ՀՐԱՉԵԱՆԻ

Երաժշտ. Մ. ՄԱՁՄԱՆԵԱՆԻ



Մեր դաշտերում ինչքան վարդեր
Ու լալաներ բորբ գոյնզգոյն,
Ոսկենըման դեղին արտեր,
Խնդուն արտեր՝ որպես Զանգուն:

Մեր դաշտերում եռուն յոյզեր
Ու մկաններ՝ պիրկ ու ջլուտ,
Անվերջ եռանդ, ծիծաղ ու սեր,
Տոգեշիշեր կամքին հլու:

Որպէս լոյսն ելեքտրոլամպի,
Լուսավառուող սեւ խաւարում,
Իշխող շունչը կուռ երկաթի
Երկաթավառ մեր սրտերում:





# ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՊԵՐԷԹ)

## ՀՕ՛, ԵՐԴՈՒՄ Կ'ԱՆԵ՛Մ

Խօսք՝ ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ

Երաժշտ. Դ. ՂԱԶԱՐԵԱՆԻ



Հօ՛, երդում կ'անե՛մ,
Որ քեզ չեմ թողնի,
Կեանքըս ոչ ոքի
Հետ ես չեմ կապի:
Առանց քեզի ես
Պիտ' մնամ անտեր:

Է՛լ մնաս բարով,
Է՛լ գնաս բարով,
Է՛լ մնաս բարով,
Է՛լ գնաս բարով,
Է՛լ մնաս բարով...



ՎԱՆԱՅ ԺԱՅՌՆ ՈՒ ԲԵՐԴԸ

# ՍԱՐԵՐԸ ՄԱՆ ԵՄ ԵԿԵԼ

## (ՔԱՌԱՁԱՅՆ ԵՐԿՍԵՌ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ)

Գ.Ր. ՍԻՒՆԻ










Սարերը ման եմ եկել,
Նար նայ, նանի ջան,
Սիրած եարիս վարդ եմ քաղել,
Նար նայ, նանի ջան...

Ծաղիկ, վարդ իրար նիւսել
Նար նայ, նանի ջան,
Դարդլու բալիս մի փունջ կապել.
Նար նայ, նանի ջան...

Բլբուլը կանգ է առել,
Նար նայ. նանի ջան,
Ալ վարդենուն աչք է առել.
Նար նայ, նանի ջան...

Արեւն է սիրտը կապել,
Նար նայ, նանի ջան,
Շող ու ջավհար արցունք թափել.
Նար նայ, նանի ջան...



# ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.




Ծիրանի ծառ, բար մի՛ տա,
Վա՜յ,
Ճըղներըդ իրար մի՛ տա,
Վա՜յ,
Ամեն մեջդ մահ գալիս
Ցաւերս իրար մի տա:

Հա՛, տուե՜ք, յե՛ս տուեք, սա՛րեր, հովն ընկաւ,
Սրտիս խնդում ծովն ընկաւ.
Գրնայ, էլ յես չը գայ էս տարուայ տարին.—
Սեւ դարդն իմ վրգովն ընկաւ:
Հո՛վ, հո՛վ, հովն ընկաւ.—
Սրտիս խրնդում ծովն ընկաւ:

Մեռայ բազում բանելեն,
Մի կողմեն ջուր անելեն,
Ծառերին բուփ չը մրնաց՝
Դարդիս դարման տանելեն:

Սեւ ամպը պըցել ա հով,
Մութը տուել ա իմ քով.
Տեսնում եք ինձ պատել ա
Էս անիրաւ արիւն ծով:

Նստած տեղիս քար չունիմ,
Էրուած սրտիս ճար չունիմ,
Ա՜յ անօրեն, փուչ աշխարհ.—
Բաղ ունիմ ու բար չունիմ:



## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԷՋԸ

# ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ

(ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂ)

Ա. ԲԺՇԿԵԱՆ




1

Ա. ԽՈՒՄԲԸ
Ջաղացպանուհի խեղճ կին՝
Թող այդ կեանքը ջաղացքին:
Բ. ԽՈՒՄԲԸ
Ջաղացպանուհի խեղճ կին՝
Այց մը տուր մեր դղեակին:
Ա. ԽՈՒՄԲԸ
Հոն կը գտնես ամեն օր,
Հագուստներ աղուոր: (կրկնել)
Բ. ԽՈՒՄԲԸ
Ապարանջան, մատանի,
Ու շատ բաներ պիտանի:

2

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Բայց ի՞նչ կ'ընեն այդ աղուոր (կրկ.)
Դղեակին մէջ ամեն օր: (կրկ.)
Ա. ԽՈՒՄԲԸ
Առտուները ուշ կ'ելլեն
Փափուկ անկողնեն: (կրկ.)
Բ. ԽՈՒՄԲԸ
Առտուները ուշ կ'ելլեն,
ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Ջաղացք դառնամ ես նորեն:

(Շարունակութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)

ԾԱՆՕԹ.— Շրջանակը երկու խումբի պէտք է բաժնուի, կէսը կ'ըլլայ Ա. խումբ, կէսը Բ. խումբ. աղջիկներէն մին ջաղացպանուհի կ'ընտրուի. ջաղացպանուհիին հարցման համեմատ իւրաքանչիւր խումբ կը պատասխանէ: Երգի վերջաւորութեան՝ խումբերը միանալով ամէնքը մէկ շրջանակ կը կազմեն, ու վերջին չորս տողերը միասին կ'երգեն:

### 3

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Երբ ընդունիմ ձեր հրաւէր (կրկ.)
Ալ ի՞նչ ունիք ինծ նուէր։ (կրկ.)

Ա. ԽՈՒՄԲԸ
Լաւ կերուխում եւ խնճոյք,
Ամէն ժամ հաճոյք։ (կրկ.)

Բ. ԽՈՒՄԲԸ
Լաւ կերուխում եւ խնճոյք,

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Ջաղացքս դառնամ, ես պարզուկ։

### 4

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Բայց ատոնք չեն բաւական. (կրկ.)
Տեսնէ՛նք, ուրիշ ինչե՞ր կան։ (կրկ.)

Ա. ԽՈՒՄԲԸ
Թաւիշ, սնդուս փայլփլուն,
Ժանեակներ սիրուն։ (կրկ.)

Բ. ԽՈՒՄԲԸ
Թաւիշ, սնդուս փայլփլուն,

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Ջաղացք դառնամ ես իսկոյն։

### 5

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Իրիկուան ժամանցի յատուկ (կրկ.)
Ի՞նչ զբօսանք ունիք դուք։ (կրկ.)

Ա. ԽՈՒՄԲԸ
Թուղթ կը խաղանք ամէնքով՝
Նստած քովէ քով։ (կրկ.)

Բ. ԽՈՒՄԲԸ
Թուղթ կը խաղանք ամէնքով,

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Ջաղացք դառնամ ես շուտով։

### 6

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Փափաքելու արժանի (կրկ.)
Դղեակն ալ բան մը չունի՞։ (կրկ.)

Ա. ԽՈՒՄԲԸ
Հարստութիւն, շատ դրամ,
Կեանք մը նոխ փարթամ։

Բ. ԽՈՒՄԲԸ
Հարստութիւն, շատ դրամ,

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Ես ջաղացքս կը դառնամ։

### 7

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Ալ աւելի սիրունիկ, (կրկ.)
Ուրիշ տեսնեմ ի՞նչ ունիք։ (կրկ.)

Ա. ԽՈՒՄԲԸ
Պարտէզ, լճակ եւ պուրակ,
Վարդ եւ շահպրակ։ (կրկ.)

Բ. ԽՈՒՄԲԸ
Պարտէզ, լճակ եւ պուրակ,

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Հաճոյք կ'զգամ քիչ մ'հիմակ։

### 8

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Սիրտս բանալու համար, (կրկ.)
Ըսէ՛ք, ալ ի՞նչ կայ յարմար։ (կրկ.)

Ա. ԽՈՒՄԲԸ
Գիրք, լրագիր եւ դաշնակ,
Միշտ երգ, պար, նուագ։ (կրկ.)

Բ. ԽՈՒՄԲԸ
Գիրք, լրագիր եւ դաշնակ,

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Հաճոյք կ'զգամ ալ հիմակ։

### 9

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Օ՛հ, վերջապէս, ի՞նչ ունիք,
Որ զիս ընէք երջանիկ։

Ա. ԽՈՒՄԲԸ
Բարի դէմքեր միշտ ժպտուն,
Սիրտեր զգայուն,
Շուտ եկուր մեր տուն։

ՋԱՂԱՑՊԱՆՈՒՀԻՆ
Բայց գէթ օրը մէկ անգամ,
Ջաղացք պէտք է երթամ գամ։

ԱՄԵՆՔԸ ՄԷԿԷՆ
(Շրջանակ կազմելով)
Մենք ալ կուգանք քեզի հետ,
Օրը անգամ մը գէթ՝
Բարեւ մը տալ զով առտուն,
Ջաղացքին սիրուն։



## ՔԱՅԼԵՐԳ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

## ԱՒԵՏԻ՜Ս ՀԱՅԵՐ

Խօսք՝ Վ. ՄԱԼԷԶԵԱՆԻ — Երաժշտ. Յ. ՍԻՆԱՆԵԱՆԻ




(Շարունակութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)



Աւետի՛ս, Հայեր, ա՛լ սուգը մէկդի,
Նոր արեւ ծագեց մեր ազգին վերեւ.
Հայութիւնն ամբողջ կուտայ ձեռք ձեռքի՝
Հայկական Միութեան դրօշին ներքեւ:

Հայեր, միանա՛նք մէկ սիրտ մէկ հոգի՝
Ազգաշինութեան վսեմ գործին շուրջ,
Մոռնալով վէրքերն եւ ոխն երէկի,
Ժա՛մ է որ ըլլանք վաղուան աշալուրջ:

Հարուստ թէ աղքատ, անուս թէ գիտուն,
Երթանք կանգնելու օճախը կործան,
Երթանք հիմնելու դպրոց, գործատուն,
Երթանք մշակին տալ ցանք ու լծկան:

Երբ ճիշդ է որ միութիւնն է միայն
Վերջին զօրութիւնն ազգիս քար ու քանդ,
Մէկ սիրտ մէկ հոգի՝ փութանք Միութեան
Սուրբ գործին բերել մեր ուխտն ու եռանդ:

Եւ դուն՝ ա՛լ մի լար թշուառ Հայրենիք,
Քանզի հրաշքով Հայը միացաւ.
Քանզի վաղն ամէնքս՝ գոհ եւ երջանիկ՝
Միութեան փառքը պիտ՝ երգենք կարգաւ:

Վահան Մալէզեան ծնած է 1873ին Ռումանիոյ Սուլինա քաղաքը: Իր հայրն էր համբաւաւոր ազգասէր բժիշկ Յ. Մալէզեան: Մանուկ հասակէն Վահան Մալէզեան կը բերուի Պոլիս, ուր կը յաճախէ Օրթաքէօյի թաղային Ազգ. վարժարանը:

Հայկական Կրթարանի ընթացքը աւարտելէ յետոյ՝ Մալէզեան կը հետեւի Պոլսոյ պետական Լիսէի եւ Իրաւաբանական վարժարանի դասընթացքներուն եւ Իրաւագէտի վկայական կը ստանայ 1895ին: Ապա իրաւաբանական ուսումը կը շարունակէ Եւրոպայի մէջ:

Վահան Մալէզեան եղած է զգայուն բանաստեղծ եւ միանգամայն ազգային գործիչ, եւ այս պատճառաւ հալածանքի ենթարկուած. 1897ին բանտարկուած է Մերսինի մէջ, ուր 9 ամիս անտանելի զնտանային կեանք մը ապրելէ վերջ, անցած է Եգիպտոս: Մալէզեան Գահիրէի մէջ հաստատուած է իրաւագիտական ասպարէզին, եւ Եգիպտոսի Բարձրագոյն Խառն Դատարանէն ընդունուած է իբրեւ Առաջին ատեանի փաստաբան (Avocat à la Cour), յարգ ու պատիւ վայելելով թէ՛ հայ եւ թէ օտար շրջանակներու մէջ:



ՎԱՀԱՆ ՄԱԼԷԶԵԱՆ

Վ. Մալէզեան Եգիպտոսի մէջ եւս չէ դադրած շարունակելէ իր ազգային գործունէութիւնը, միշտ ջանալով օգտակար ըլլալ ազգին: Իր բազմաթիւ հրապարակագրութիւններէն եւ բանախօսութիւններէն շատերը երեւցած են նաեւ օտար մամուլին մէջ: Ան միեւնոյն ժամանակ կը թղթակցէր Պոլսոյ թերթերուն հետ, իր գեղեցիկ ոտանաւորներով եւ արձակ քերթուածներով զարդարելով անոնց էջերը:

Մեծ Պատերազմի Զինադադարէն յետոյ Մալէզեան անցաւ Եւրոպա, ուր քիչ ժամանակ յետոյ կոչուեցաւ Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան Վարիչ-Պատուիրակի պաշտօնին, եւ զոր ցարդ կը շարունակէ վարել կատարեալ ձեռնհասութեամբ, համակրութիւնը շահելով ամէնուն:



# ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԵՐԳԵՐԻՑ

## ԼՈՅՍԸ ԲԱՑՈՒԵՑ, ԳՆԱՄ ԱՐՏԸ

Խօսք՝ Վ. ԱՂԱՍԵԱՆի — Երաժշտ. ԽՈՐԷՆ ԹՈՐՋԵԱՆի




Լոյսը բացուեց, գնամ արտը,
Կանաչել են սարն ու հանդը,
Էն տրաքտոր քշող տղան
Ինձ է կանչում, մեռնեմ նրան:

Արեւի հետ զարթնել է նա,
Զրնգզրնգում է երգը նրա,
Ա՜խ, էն աղուոր, ջահել տղան
Ջա՛ն, իմ եարն է, մեռնեմ նրան:

Հասակն ասես՝ սոսի լինի
Գիշերից սեւ աչեր ունի.
Գարունից էլ սիրուն տղան
Գերել է ինձ, մեռնեմ նրան:



ԿԱՐԻՆԻ ՀԻՆ ՄԻՋՆԱԲԵՐԴԸ

12229
FE 2002

## ՀԱՅՐԵՆԻ ԱՌՈՒԱԿ

Moderato

Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ




Մեր տնակին քովիկէն,
Անցիր հեշտ ու խնդալէն,
Կարկաչէ մեզ երգն այն հին՝
Հայրենի մեր յուշերէն.
Արդ, հոսէ՛ առուակդ անքուն,
Ջուրերդ զով տար հեռուն:

Դու առուակ զուարթ սիրուն,
Բեր զեփիւռ մեր արտերուն.
Դեռ թարմ են հին, հին յուշեր,
Երբեմնի այն սարերուն.
Արդ, հոսէ՛, առուակդ անքուն,
Ջուրերդ զով տար հեռուն:



## ԱՅՍ ԱԼ Կ'ԱՆՑՆԻ

Moderato

Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ




Ցաւեր, հոգեր ու դառն վիշտեր,
Ո՞ր սիրտ հոգին չեն խոցոտեր.
Ամէն սրտի մէջ կայ մի խոց,
Ոմանց անթեղ, ոմանց տաք բոց.
Բայց մի բան կայ որոշ, յայտնի,
Յիշել միշտ թէ՝ «Այս ալ կ'անցնի»:

Կուգան բարդ, բարդ ամպեր խաւար,
Մտքի յոյզեր ալ խելագար,
Վայրկեաններ կան, ալ ցընորած,
Ոմանք կ'ըսեն, «Չկա՛յ Աստուած»:
Բայց մի բան կայ որոշ, յայտնի,
Յիշել միշտ թէ՝ «Այս ալ կ'անցնի»:

Մին զայրացած, մին յուսահատ,
Չար բաղդին դէմ կ'ընեն գանգատ.
Ոմանք ալ կան ճարահատ են,
Սառ երկինքէն գութ կը հայցեն,
Բայց մի բան կայ որոշ, յայտնի,
Յիշել միշտ թէ՝ «Այս ալ կ'անցնի»:

Ահա այսպէս կուգան կ'երթան,
Ժամանակը ու ամէն բան,
Քանի որ կանք, պիտի անցնին,
Անկարելին, անտանելին,
Մի ճար ունինք որոշ, յայտնի,
Տոկալ, ըսել, «Այս ալ կ'անցնի:»

# ԵՍ ՆՈՒՌ ԵՄ

Խօսք՝ Ս. ՏԱՐՕՆՑԻԻ

Երաժշ. Գ. ՄԻՐԶՈՅԵԱՆԻ




Ես նուռ եմ, սիրով հուր եմ,
Ջահել սրտին մրմուռ եմ,
Արագի պես լափ կը տամ,
Սեր ու սավդա կը վառեմ:

Տրակտորը քշում ես,
Մրգով լիքը աշուն ես,
Աչքով, ունքով ես անում
Սիրտ ու հոգիս մաշում ես:

Ա՜յ տղայ, հանդ ես գնում,
Նայիրեան արտ ես գնում,
Կեպին թեքել ես ճակտիդ,
Էնպես հպարտ ես գնում:

Էս օր ինձ եար ես դառել,
Իմ սրտի տեր ես դառել,
Մեր արտերի ուժիցը —
Գիւղի մեջ սար ես դառել:

Հա՛մ խելօք ես, հա՛մ դող ես,
Սարերի վառ սմբուլ ես.
Տուն ու տեղդ չեն մնայ —
Սիրով ու սափրով բոլ ես:



ՀԱՍԱՆ-ԳԱԼԷԻ ՀԻՆ ԲԵՐԴՆ ՈՒ ՋԵՐՄՈՒԿԸ



## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԷՋԸ

# ՊՈՒՊՐԻԿԸ



**1**
ՊՈՒՊՐԻԿԸ
Թրա, լա, լա,
Պուպրիկն անա
Ելաւ կուգայ,
Թրա, լա, լա, լա
Տիկիններուս
Բարի լոյս:

**2**
ԽՈՒՄԲԸ
Արթնցե՞ր ես,
Անառակ քեզ,
Բայց գիտե՞ս
Շուտ պէտք է հագուիս
Որ չը պատժուիս:

**3**
ՊՈՒՊՐԻԿԸ
Թրա, լա, լա
Պուպրիկն անա
Հա, հա, հա, հա,
Թրա, լա, լա, լա,
Գուլպայ կ'ուզէ
Շուտ կ'ուզէ:

**4**
ԽՈՒՄԲԸ
Զուտ մետաքսէ
Գուլպադ հոս է,
Քիչ խօսէ,
Եկուր որ հագուիս,
Ցուրտ է կը մսիս:

**5**
ՊՈՒՊՐԻԿԸ
Թրա, լա, լա
Պուպրիկն անա
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Թրա, լա, լա, լա
Կօշիկ կ'ուզէ
Շուտ կ'ուզէ:

**6**
ԽՈՒՄԲԸ
Կօշիկ մ'աղուոր
Առինք մենք նոր
Դեռ այսօր,
Որ մինի մինի
Պուպրիկնիս հագնի:

### 7

ՊՈՒՊՐԻԿԸ

Թրա, լա, լա
Պուպրիկն ահա
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Թրա, լա, լա, լա,
Տափատ կ'ուզէ
Շուտ կ'ուզէ:

### 8

ԽՈՒՄԲԸ

Առէ՛ք նայինք
Տափատ մ'ալ չիք,
Կ'ախորժի՞ք,
Դեռ ծալքը վրան,
Շատ սիրուն է ան:

### 9

ՊՈՒՊՐԻԿԸ

Թրա, լա, լա
Պուպրիկն ահա
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Թրա, լա, լա, լա
Օձիք կ'ուզէ
Շուտ կ'ուզէ:

### 10

ԽՈՒՄԲԸ

Օձիքդ ալ, տե՛ս
Ձիւներու պէս
Կը տեսնե՞ս,
Ալ ի՞նչ կ'ուզէք դեռ
Մեծապատիւ տէր:

### 11

ՊՈՒՊՐԻԿԸ

Թրա, լա, լա
Պուպրիկն ահա
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Թրա, լա, լա, լա
Փողկապ կ'ուզէ
Շուտ կ'ուզէ:

### 12

ԽՈՒՄԲԸ

Փողկապդ ալ ա՛ռ
Ծաղկենըկար,
Շատ յարմար.
Ալ ի՞նչ կ'ուզէք դեռ
Մեծապատիւ տէր:

### 13

ՊՈՒՊՐԻԿԸ

Թրա, լա, լա
Պուպրիկն ահա
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Թրա, լա, լա, լա
Բանկոն կ'ուզէ
Շուտ կ'ուզէ:

### 14

ԽՈՒՄԲԸ

Շատ լաւ, պարոն
Առէք բանկոն,
Ըսէք, օ՛ն,
Ալ ի՞նչ կ'ուզէք դեռ
Մեծապատիւ տէր:

### 15

ՊՈՒՊՐԻԿԸ

Թրա, լա, լա
Պուպրիկն ահա
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Թրա, լա, լա, լա,
Թիկնոց կ'ուզէ
Շուտ կ'ուզէ:

### 16

ԽՈՒՄԲԸ

Թիկնոցդ ահա
Վերջին մօտա
Մեծ աղա.
Ալ ի՞նչ կ'ուզէք դեռ
Մեծապատիւ տէր:

### 17

ՊՈՒՊՐԻԿԸ

Շնորհակալ եմ,
Ձիս կը պատուէք,
Շատ ազնիւ էք,
Տուէք խնդրեմ
Գաւազանս ալ
Գլխարկս ալ:

### 18

ԽՈՒՄԲԸ

Ո՛հ, սիրուն ես
Հիմա այդպէս,
Կը տեսնե՞ս.
Միշտ փափուկ վարուէ
Որ մարդ քեզ պատուէ:

ԾԱՆՕԹ.— Խաղին սկիզբէն Պուպրիկը խումբին մէջ երկու տղայ կ'ընտրէ որոնք հետզհետէ իրեն կը ներկայացնեն իր ուզած առարկաները՝ գուլպայ, կօշիկ, տափատ եւն., եւ իրեն հետ կ'երթան ու կուգան:



## ԵՍ ՍԻՐԵՑԻ

Խօսք՝ Վ. ԹԷՔԷԵԱՆի

Երաժշ. Գ. Մ. ԱԼԷՄՇԱՀԻ





Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներէս գիտցաւ թէ՝
Զինքը ո՛րքան սիրեցի...
Ո՞վ գիտէ սիրտը կարդալ:

Սէրս կարծես այն գետն էր
Որ իր հոսանքը անբաւ
Առաւ լեռան ձիւներէն
Ու լեռը զայն չտեսաւ:

Սէրս կարծես այն դուռն էր
Ուրկէ ոչ ոք մտաւ ներս.
Ծաղիկներով ծածկուած՝
Գաղտնի պարտէզ մ'էր իմ սէրս·

Ու երբ սէրս ոմանք
Երկինքին վրայ՝ անսահմա՛ն
Տեսան ծուխի մը նման,
Կրակն անոր չտեսան...:



ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Ծնած է 1878ին, Պոլսոյ Օրթագիւղ թաղը. նախնական ուսումը ստացած է Սկիւտարի Պէրպէրեան Վարժարանը, ուրկէ վերջ աշակերտած է Ղալաթիոյ Կեդրոնական Վարժարանին:

Վահան Թէքէեան շատ երիտասարդ հասակէն սկսած է արտադրել գրական գեղեցիկ քերթուածներ: Իր գրական սկզբնաւորութիւնը ըրած է իննսունական թուականներուն, Պոլսոյ «Հայրենիք» օրաթերթին եւ «Ծաղիկ» ու «Տեսարան» հանդէսներուն մէջ:

1896ի սկիզբները, քաղաքական դէպքերու բերումով, Թէքէեան կը հեռանայ Պոլսէն եւ կ'անցնի Եւրոպա, ուր կ'աշխատակցի «Անահիտ»ին, «Ազատ Բեմ»ին, «Նոր Կեանք»ին եւ «Լուսաբեր»ին, թէ՛ իր բուն անունով եւ թէ զանազան ծածկանուններով, ինչպէս՝ «Ասուպ», «Համշիրակ Բ.», «Սուրէն Տիրանեան» եւայլն:

Վահան Թէքէեան Եգիպտոսի մէջ, 1905ին, Միքայէլ Կիւրճեանի հետ հրատարակած է «Շիրակ» ամսաթերթը, եւ նուիրուած է գրական եւ ազգային գործունէութեան, մօտէն հետաքրքրուելով իր պատկանած համայնքին ցաւերով:

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն յետոյ, Թէքէեան Պոլիս վերադառնալով, ազգային երեսփոխան ընտրուած է Եգիպտոսի հայ գաղութին կողմէ: Պահ մը Պոլսոյ մէջ վերհրատարակած է «Շիրակ»ը իբր շաբաթաթերթ եւ մասնակցած է «Հայրենիք»ի խմբագրութեան: Մեծ Պատերազմի նախօրեակին՝ իբր Քննիչ Յանձնախումբի անդամ Օրմանեան Սրբազանի հետ մեկնեցաւ Երուսաղէմ եւ ապա անցաւ Եգիպտոս, այսպէսով ազատելով Պոլսոյ Հայ մտաւորականներուն վիճակուած սպանդէն:

Մեծ Պատերազմի Զինադադարէն յետոյ Թէքէեան վերադարձաւ Պոլիս, ուր պահ մը ստանձնեց «Ժողովուրդի Ձայն» օրաթերթին խմբագրապետութիւնը: Քէմալական շարժումէն յետոյ ինքն ալ հեռացաւ Պոլիսէն, եւ մերթ Եւրոպա, մերթ Եգիպտոս իր բնակութեանց ընթացքին՝ միշտ նուիրուեցաւ գրական եւ ազգային գործունէութեան: Եւ Հայութիւնն ալ՝ ի յարգանս իր բեղմնաւոր գործունէութեան վերջերս արժանավայել կերպով տօնեց իր գրական վաստակաւորի 40ամեայ Յոբելեանը: Թէքէեան այժմ խմբագրապետն է Գահիրէի «Արեւ» օրաթերթին:



## ԲՈՒԽՈՒՐԻԿ

Խօսք՝ Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ — Երաժշտ. Գ. Մ. ԱԼԷՄՇԱՀԻ





Ծըխէ՛, ծըխէ՛, ո՛վ բուխուրիկ հայրենի,
Կարօտանքիս այրումով.
Ես հեռու եմ բայց ծուխդ հոգւոյս կը հասնի,
Իմ սարերու հովերով:

Դիւթուած հիւղակ՝ սրինգներով հովուական,
Դալարին մէջ լուռ քնով,
Անգամ մը գէթ քաղցրութեանդ մէջ մայրական
Գայի անուշ երազով:

Ծըխէ՛, ծըխէ՛, ո՛վ բուխուրիկ հայրենի,
Կարօտանքիս այրումով:



ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ

Գուրգէն Ալեմշահ ծնած է Պարտիզակ, 1907ին: Նախնական ուսումը ստացած է նախ Պոլսոյ Մխիթարեան վարժարանը, ապա Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան հաստատութեան մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է 1923ին: Այնուհետեւ Ալեմշահ անցած է Միլան, ուր մրցման քննութիւն մը անցընելէ յետոյ՝ ընդունուած է տեղւոյն Պետական Երաժշտանոցը, հոն աշակերտելով Փիզեթթիի, Բոսսիի, Փարիպենի եւ ուրիշ համբաւաւոր երաժշտագէտ վարպետներու:

Սոյն Գօնսէրվաթուարին մէջ, Ալեմշահ, իր ուսանողութեան ընթացքին իսկ ցոյց տուած է երաժշտական յատուկ կարողութիւն, մասնաւոր գնահատանքին արժանանալով հաստատութեան Տնօրէնին՝ որ հետեւեալ պատուաբեր վկայութիւնը տուած է իր մասին. «Առանց այժմէն դատելու եւ կռահելու Ալեմշահի ամբողջական կարողութիւնը, վստահօրէն կրնամ ըսել թէ եզական են իր ներշնչման աղբիւրները եւ գնահատելի՝ զանոնք մշակելու եւ ընդլայնելու համար ցոյց տուած յատկութիւնը: Արեւմտեան երաժշտական թեքնիքի բոլոր նրբութիւնները յարգելով եւ գործածելով հանդերձ, իր երաժշտական շարադրութիւնները զերծ կը մնան ոեւէ այլակերպումէ եւ կը պահեն ինքնուրոյն եւ հաճելի շեշտ մը:

Ալեմշահ 1930ին Միլանի Պետական Երաժշտանոցին ընթացքը աւարտելով կը ստանայ երգահանի վկայական եւ Բրօֆէսէօրի տիտղոս: Նոյն տարին իսկ, Բարիզի Սամուէլ Մուրատեան վարժարանի երաժշտութեան ուսուցչի պաշտօնին կոչուելով, Ալեմշահ կը հաստատուի Բարիզ եւ կը կազմէ «Կիլիկիա» երգչախումբը, եւ անով յաճախ կը մասնակցի հայ եւ օտար կազմակերպութիւններու սարքած հանդէսներուն, հայ երաժշտութիւնը ծանօթացնելով օտարներուն ալ: Ալեմշահ հետզհետէ կը ձեռնարկէ հեղինակել եւ դաշնաւորել շարք մը հայկական երգեր եւ կ'արտադրէ երաժշտական գործեր, որոնցմով կը դասուի մեր լաւագոյն երաժիշտներու կարգին:

Ալեմշահ բացի իր հեղինակած երաժշտական գոհարներէն, ձայնագրած է նաեւ կարգ մը Ֆիլմերու երաժշտական բաժինը:

Ալեմշահ այժմ ձեռնարկած է երաժշտական թուրնէի մը, այցելելով հայ գաղութները եւ կազմակերպելով սէնֆօնիք նուագահանդէսներ, որոնք ցոյց կուտան իր երաժշտական բեղուն հմտութիւնը:



## ՕՐՀՆԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ




Ամէն Հայի սրտից բղխած,
Լսիր այս ձայն, ո՜վ Աստուած,
Երկար կեանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հօր:

Տէ՛ր, անսասան պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:



# ԻՄ ԵՐԳԸ

Խօսք՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆի

Եղանակ. Գ. Մ. ԱԼԽԱՆԵԱՆի








Գանձեր ունեմ անսակ անծեր,
Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ,
Ծով բարութիւն, օրհնանք ու սէր,
Շոխ պարգեւ եմ առել վերուստ:

Անգին հանքը իմ գանձերի,
Սրտիկս է էն ու ազատ,
Ինչքան էլ որ բաշխեմ ձրի,
Սէրն անվերջ է ու անհաս:

Նար նա նա նայ, ջան նա նա նայ,
Նար նա նա նա նայ, նար նա նա նայ,
Ջան նա նայ, նար նա նա նա նայ:

Երկիւղ չունեմ, ա՛հ չունեմ ես,
Գողից, չարից, չար փորձանքից.
Աշխարհով մին անհա էսպես՝
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Ես հարուստ եմ, ես բախտաւոր
Իմ ծընընդեան պայծառ օրէն,
Էլ աշխարհ չեմ գալու հոն որ
Իր տուածն եմ տալիս իրեն:

Նար նա նա նայ, ջան նա նա նայ,
Նար նա նա նա նայ, նար նա նա նայ,
Ջան նա նայ, նար նա նա նա նայ:

# ԵՍ ԲԼԲՈՒԼ ԵՄ

Խօսք՝ Ա. ԽՆԿՈՅԵԱՆԻ

Երաժշտ. Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ




Ես բլբուլ եմ, մի բուն ունեմ,
Մի բուն ունեմ սարին է,
Սիրտս բոց է, սիրտս խոց է,
Մէջը լիքը արիւն է:

Վա՜յ լէ լէ լէ, վա՜յ լէ, լէ լէ լէ,
Վա՜յ լէ լէ լէ, վա՜յ լէ, լէ լէ լէ,
Սիրտս բոց է, սիրտս խոց է,
Մէջը լիքը արիւն է:

Սիրտս կուլայ, կը մըզկըտայ,
Ցաւը թափեց թեւերս,
Վարդըս քաղած, բուփը դատարկ,
Էլ ո՞ւմ ասեմ երգերս:

Վա՜յ լէ լէ լէ, վա՜յ լէ, լէ լէ լէ,
Վա՜յ լէ լէ լէ, վա՜յ լէ, լէ լէ լէ,
Վարդըս քաղած, բուփը դատարկ,
Էլ ո՞ւմ ասեմ երգերս:



# ԱՂՈՒՈՐՆԵՐՈՒՆ

Երաժշտ. Գ. ԱԼԷՄՇԱՀԻ

Խօսք՝ Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ




(Շարունակութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)



Աղուորներուն համար Տէ՛ր իմ,
Մոմի նման պիտի հալիմ.
Չեմ դիմանար ես արեւին,
Տառապանքին ու ծարաւին:

Աղուորներուն համար Տէ՛ր իմ,
Ծառի նման պիտի անիմ,
Ես չեմ վախնար փոթորիկնեն,
Կայծակներէն ու կրակէն:

Աղուորներուն համար Տէ՛ր իմ,
Մեռնիլ կ'ուզեմ, ի՞նչպես ապրիմ.
Աղուորներուն համար Տէ՛ր իմ,
Ապրիլ կ'ուզեմ, ի՞նչպես մեռնիմ:

## ԿԱՔԱՒԻԿ

Խօսք եւ Երաժշ. Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ






## ԼՈՒՍԻՆ

Մշակում՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՃԵԱՆԻ




Լուսին ելաւ ան սարէն,
Սարի բարձր կատարէն,
Շեկլիկ մեկլիկ երեսով,
Փռեց գետնին լոյսի ծով:
Ջա՜ն, ա՜յ լուսին, ջա՜ն քո լոյսին,
Ջա՜ն քո կլոր շէկ երեսին:

Խաւար շուտով չքացաւ,
Ու ալ գետնին չի կեցաւ,
Լուսնի լոյսէն հալածուած,
Խոր ձորերու մէջ մնաց:
Ջա՜ն, ա՜յ լուսին, ջա՜ն քո լոյսին,
Ջա՜ն քո կլոր շէկ երեսին:

Բայց ամպերը մոլեգին
Նախանձեցան լուսնակին,
Ելան երկինք կապուտակ,
Լուսինն առին իրենց տակ:
Ջա՜ն, ա՜յ լուսին, ջա՜ն քո լոյսին,
Ջա՜ն քո կլոր շէկ երեսին:

## ԿԱՔԱՒԻԿ

Ա՜խ, իմ կաքաւիկ, նաշխուն, սիրունիկ,
Չալի թփիկին միջին շրջմոլիկ.
Կը կաքաւես պար պար ձենիկդ սարէ սար,
Ձենիկդ է եռուած կաքաւիկ քո եար:

Սեւ սարի գլխին, անտառի միջին,
Սեւ կաղնի ներքեւ թառիս գիշերին,
Շաթախին՝ ձենիկդ լեռ ու սարեր առած,
Խումբ խումբ դուրս կը վազեն հաւիկներ
քընած:

Կանաչ դաշտերէն անցնիս գիշերով,
Նազ կ'անես հրպարտ, գոռոզ քայլուածքով,
Կէսօրին տաք շողին, զով առուակին քովիկ,
Շուրջդ պար, պար անեն ձագերդ խորոտիկ:

Աշնան՝ երբ քամին թափէ տերեւներ,
Վարանըդ փոխես, չունես տաք չօլեր,
Երբ գարունի դռներն բացուին նաշխուն,
փայլուն,
Թեւիկներդ բանաս սարերի գըլխուն:

Ա՜խ իմ կաքաւիկ, խորոտիկ հաւիկ,
Վըզիկըդ նաշխուն՝ կարմիր քո տոտիկ,
Քարի վերեւ թառած, ոտիկըդ վեր առած,
Կարմրուկ կըտուցով ձեն կուտաս քաջաց:

# ԾԱՂԻԿ ԷԻ

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆի

Երաժշտ. Գ. ԱԼԷՄՇԱՀի

Lento ♩ = 48





# ԾԱՂԻԿ ԷԻ

Ծաղիկ էի նորաբողբոջ՝
Սարի լանջում, երկնի տակ.
Ինձ կը դիւրէր առուի խոխոջ,
Ինձ կ'ողջունէր արեգակ:

Գիշերները աստղ ու լուսին
Վար կ'իջնէին երկընքէն,
Որ հէքեարներ ինձ ասէին,
Կախարդական, ոսկեղէն:

Գառների հետ լուսածագին
Եկար սարը՝ ջա՛ն աղջիկ,
Ինձ քաղեցիր, դրիր անգին
Կրծքիդ վրայ գեղեցիկ.

Այնտեղ զուարթ՝ ես ապրեցայ
Երազներով երջանիկ,
Սիրտդ ինձ դաւեց սեւաչեայ,
Ես չորացայ, ջա՛ն աղջիկ:

# ԻՄ ԵԱՐԸ

Սիրուն աստղեր հուր աչիկներ,
Ձեր շողն ու փայլն են սիրուն,
Սակայն եարիս սեւ սար աչեր՝
Ձեզանից էլ են սիրուն:

Հաւատացէք, աչերն այդ խոր,
Թէ լինէին երկընքում,
Մարդիկ բոլոր պիտ' ուզէին որ
Գիշեր լինէր միշտ կեանքում:

Լողանում է իմ եարն այսօր
Պաղ ու վճիտ ջրերում,
Իմացել են աստղեր բոլոր
Ու բաց կացեր ամպերում:

Ծերուկ լեռներ, հսկայ ժայռեր՝
Ըստուեր ձգէք ջրերին,
Որ արեւի չար շողիկներ
Չը համբուրեն իմ եարին:

(Եղանակի ձայնագրութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)

## ԻՄ ԵԱՐԸ

Խօսք՝ Ա. ՉԱՐԸՔԻ

Երաժշտ. Գ. ԱԼԷՄՇԱՀԻ






## ՈՒՐԱԽ ԿԵԱՆՔԻ ՇԷՆ ՕՐԵՐ

Խօսք եւ Երաժշտ. Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ



Ուրախ կեանքի շէն օրեր
Կը վայելենք ընկերներ,
Պատանեկան անբասիր
Կեանքի մէջ ըլլանք քաջ, ժիր:

Ծաղիկ կեանքի նոր օրերը փայլուն,
Բարի սերմերով լեցուն, յուռթի ու բեղուն,
Մտքի պաշարով լի գլուխներնիս արթուն,
Սրտերնիս ալ ըլլայ ծաղկաստան բարւոյն:

Ուրախ ըլլանք ընկեր ջան,
Սիրենք գործել ժրաջան,
Պատեհ ժամերն թանկագին
Ջանցնենք պարապ, ամուլ, սին:

Ծաղիկ կեանքի նոր օրերը փայլուն
Բարի սերմերով լեցուն, յուռթի ու բեղուն,
Մտքի պաշարով լի գլուխներնիս արթուն,
Սրտերնիս ալ ըլլայ ծաղկաստան բարւոյն:

Վստահ ըլլանք ընկերներ,
Պսակուին պիտ՝ մեր ջանքեր,
Յաջողութեան է պայման
Ըլլալ տիպար մարդն օրուան:

Ծաղիկ կեանքի նոր օրերը փայլուն,
Բարի սերմերով լեցուն, յուռթի ու բեղուն,
Մտքի պաշարով լի գլուխներնիս արթուն,
Սրտերնիս ալ ըլլայ ծաղկաստան բարւոյն:

# ԻՄ ԲՈՒԽՈՒՐԻԿԸ(*)

Ո՛ ՏԱՅՐ ԻՆՁ ԾՈՒԽ ԾԽԱՆԻ

Իմ բուխուրիկն ես կը սիրեմ կարօգին
Իր որմերով սեւ ու մութ,
Ուր կերտուած է ալապաստրէ իմ մարմինն՝
Սափորն հոգւոյս լուսանիւթ:

Բաղեղներու հըմայքին մէջ գրկապինդ
Յուշերուս տունն է կղպուած,
Ոսկի բալլիքն ես սրտիս մէջն եմ պահած՝
Երբ դեռ լեզուս չէր բացուած:

Այդ՝ պալատն էր իմ մանկական աշխարհին
Դալար մամռով կերտուած,
Կեանքն երազ էր ու նոր հէքեաթ սիրային,
Վարդին ցողովը գրուած:

Լուռ ամայի դաշտերուն մէջն էր ինկած
Իբրեւ մոռցուած յիշատակ,
Ուր նըրբահիւս ծուխ մը կ'ելլէր տառաժուած
Սընդուս վրան մը բարակ:

Շաղը կ'իջնէր գիշերն յակինթ շըղարշով
Աստղերու բո՛ցը վրան,
Ու փափկասուն մըրթընշաղին ծիլերով
Բուխուրիկս էր ոսկեման·

Արեւն ամբողջ հոն կը լեցուէր ամէն օր
Սիրականի գըգուանքով,
Եւ շուշաններ, կարմիր վարդեր նորանոր
Շարուած էին հիւղիս քով:

Խոկուն ծիտեր փըլատակուած երդիքին
Նստած էին քիւին տակ,
Ու պատերս սորված այգուն մեղեդին
Կը կրկնէին շարունակ:

(Հայրենի Կռակարան)

Հացի շոգին բուխուրիկիս ծերպերէն
Մօրս շրնչին հետ դուրս կ'ելլէր,
Ու քրմական կարծես կոչի դիւթանքէն
Կ'երթար երկինքն աղօթկեր:

Բոյրն ես կը զգամ դեռ այդ հացին՝ մէջն հոգւոյս,
Մանանայի պէս անոյշ,
Ճերմակ ու զիրգ կարծես խիւսներ շաղուած լոյս
Մօրս մատներովը քնքոյշ:

Այդ հինաւուրց տունն է հոգւոյս ուխտավայր
Լուռ խոկումովն աղօթքի,
Ուր հին Նարեկ մ'էր իմ սրտիս սուրբ բուրվառ
Նըկարին տակ Յիսուսի:

Դիւթուա՛ծ հիւղակ, սրինգներով հովուական,
Դալարին մէջ լուռ քընով,
Անգամ մը գէթ քաղցրութեանդ մէջ մայրական
Գայի՛ անոյշ երազով:

Ծըխէ՛, ծըխէ՛, ո՛վ բուխուրիկ հայրենի,
Կարօտանքիս այրումով,
Ես հեռու եմ, բայց ծուխդ հոգւոյս կը հասնի
Իմ սարերուս հովերով:

Ո՛րքան անոյշ աղօթքի պէս մեղրածոր
Բարբառ մ'ունիս ինծ համար,
Երբ կը պատմես իմ պապերս հեռաւոր
Յիշատակներ անհամար:

Թէպէտ որմերդ են հընամաշ, սեւաթոյր,
Բայց դուն ունիս սիրողներ,
Թէ բիւր մահեր աչքիս քաշեն վարագոյր,
Ես դեռ ունիմ տեսիլներ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(*) Հոս կուտանք ամբողջութիւնը Հ. Վ. Յովհաննէսեանի «Իմ Բուխուրիկը» գողտրիկ բանաստեղծութեան, որուն մէկ փոքրիկ մասը միայն երգի համար ձայնագրուած է հմուտ երաժշտագէտ Գ. Ալեմշահի կողմէ եւ զոր տուած էինք մեր նախորդ պրակին մէջ: (Տե՛ս էջ 275)



# ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Խօսք եւ Երաժշ. Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ



Հանգչեցէք դուք անդորր, Նահատակ եղբայրներ,
Մարտի մէջ անաւոր դուք ինկաք կարեվէր,
Բայց ձեր սուրբ յիշատակ հայութեան հոգւոյն մէջ՝
Եղբայրներ Նահատակ՝ կ'ապրի զերթ հուր անշէջ,
Ու անով ոգեւոր սերունդներ հայկական
Պիտ' քալեն ձեր համբով դէպի լոյս ապագան:

(Եղանակին շարունակութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)





# ՏԻԼՊԱՐ ՋԱՆ(*)

Երաժշտ. Գ. ՂԱԶԱՐԵԱՆԻ




(*) Գոհացում տալու համար երաժշտասէրներէն շատերուն կողմէ յայտնուած փափաքին, հոս կու տանք միաձայն եղանակը «Տիլպար ջան»ին, որուն քառաձայնը տուած ենք արդէն նախապէս: (Տե՛ս Պրակ 31, էջ 251)

## ԿԱՔԱՒ ԹՌԱՒ

Adagio

Երաժշ. Գ. ՍԻՒՆԻ



(Եղանակին շարունակութիւնը եւ բառերը տեսնել յաջորդ էջին վրայ)





Կաքաւ բրաւ բարձր քարին,
Կուլայ մրմուռ իր ջիգեարին,
Ինձ մօտ տարէք Սիփան սարին,
Կարօտել եմ անուշ եարին։
Արի՛, եար ջան, բարո՛վ արի,
Զրնգզրնգալէն սարո՛վն արի։

Սիփան սարը զառ չիման է,
Եարն եմ սիրեր, աննման է,
Մեռնիմ եարոջ օրօր քէլքին,
Ջինար բոյին, արեւ տեսքին։
Արի՛, եար ջա՛ն, բարով արի,
Ծաղկըներով սարո՛վն արի։

Դու բարակ ես, բարունակ ես,
Արեգական նմանակ ես,
Մէջ իմ սրտին անանակ ես,
Հոգիս երուաւ, բոց կրակ ես։
Արի՛, եար ջա՛ն, բարո՛վ արի,
Նարօտ կապած սարո՛վն արի։

## ԿԱՐՄԻՐ ԱՐԵՒ

Երաժշ. ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆի

Allegretto Խօսք՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆի



Ես սիրում եմ կարմիր արեւ,
Ես սիրում եմ կանաչ արեւ,
Ա՛յ, արեւիկ ծիւ ծիւ ծիւ,
Ա՛յ, տերեւիկ տիւ տիւ տիւ։

Ինձ տուել էք երկու թեւիկ,
Ինձ տուել էք փոքրիկ սրտիկ,
Ա՛յ, իմ թեւիկ ծիւ ծիւ ծիւ,
Ա՛յ, իմ սրտիկ տիւ տիւ տիւ։

# ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՒՐ

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Երաժշտ. Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ



Հայրենի աղբիւր, երգերս վրնիս
Հիւսել կուզայի բիւրեղ կարկաչիդ.

Ես հիմա այնպէս յոգնած եմ ու լուռ,
Դու նորէն կ'երգես, հայրենի աղբիւր:



# ՆԱԶԷԻ ՕՐՕՐԸ

Խօսք՝ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ




Քընի՛ր, իմ բալիկ, օրօր ի՛շ արա,
Դու լաց մի՛ լինիր, ես շա՜տ եմ լացել:

Կոյր կըռունկները սուգ ու շիւանով
Մեր սեւ երկընքով եկան անց կացան,
Ա՜խ, մեր լեռներում նրանք կուրացան,
Դու լաց մի՛ լինիր, ես շա՜տ եմ լացել:

Հողմն է հեծեծում սեւ անտառներում,
Անտէր մեռելի սուգն է այն, բալի՛կ,
Անտէր ու անթաղ մեռելները շատ,
Դու լաց մի լինիր, ես շա՜տ եմ լացել:

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով,
Սեւ անապատում ծունկ չոքեց, մընաց,
Այն մեր աշխարհի դարդ ու գուլումն է,
Դու լաց մի՛ լինիր, ես շա՜տ եմ լացել:

Գայլերն են ոռնում հեռու դաշտերում,
Մի՛ վախեր, բալիկ, քընիր, սուս արա,
Մարդի ձայն չըկայ, ո՛չ շունչը թունոտ,
Դու լաց մի՛ լինիր, ես շա՜տ եմ լացել:

Դալուկ շրթունքիդ իմ կաթը սառեց,
Գիտեմ, այն դառն է, չես ուզում, բալի՛կ,
Ա՜խ, վըշտիս թոյնն է քամուել նըրա մէջ,
Կուրծքս ցաւոտ է, ես շա՜տ եմ լացել:

Կաթիս հետ մէկտեղ սեւ վիշտըս ծըծի՛ր,
Հոգուդ մէջ թող նա սեւ վըրէժ դառնայ,
Ծըլի՛ր, բոյ քաշիր, բոյիդ ես ղուրբան.
Դու լաց մի՛ լինիր, ես շա՜տ եմ լացել:

Ցուլունք եմ շարել, կապել օրոցքիդ՝
Չար աչքերի դէմ, մեր չար դուշմընի,
Քընի՛ր ու անի՛ր, շո՛ւտ արա, բալի՛կ,
Դու լաց մի՛ լինիր ես շա՜տ եմ լացել:

Քընիր ու անի՛ր, թիկունքիդ ղուրբան,
Եւ ճամբէ՛դ գնա, —հըսկայի՜ ճամբէն,—
Մենք գութ չըտեսանք, դու խրո՛խս անցիր,
Եւ լաց մի լինիր, ես շա՜տ եմ լացել:

Երկար կըռունկով, թունաւոր օձի,
Գըլուխը փըշրիր անողորմ օձի,
Հըզօր ոտքիդ տակ չարիքը դողայ.
Դու լաց մի՛ լինիր, ես շա՜տ եմ լացել:

Քընի՛ր, իմ բալիկ, օրօր ի՛շ արա,
Դէ՜հ, շո՛ւտ, բո՛յ քաշիր, ես շատ եմ լացել...

## ՄԵՆՔ ԵՆՔ ԱԶԱՏ

Խօսք եւ երաժշտ. Ա. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆԻ




Մենք ենք ազատ, ուրախ ու կայտառ,
Սրտերնիս ալ խինդ ու խանդավառ.
Լա լա լա լա լա լա լամ,
Լա լա լա լա լա լա լամ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Մերն է այս աշխարհ,
Հոգ, ցաւ չենք զգար:

Լեռ դաշտ ու սար մեր ոտքերուն տակ,
Խնդուք, ծիծաղ, ճիչեր ու կատակ.
Լա լա լա լա լա լա լամ,
Լա լա լա լա լա լա լամ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Մերն է այս աշխարհ,
Հոգ, ցաւ չենք զգար:

Արեւն փայլի, կանանչ են դաշտեր,
Սրտերնիս ալ խինդով են ծաղկեր.
Լա լա լա լա լա լա լամ,
Լա լա լա լա լա լա լամ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Մերն է այս աշխարհ,
Հոգ, ցաւ չենք զգար:

Ի՞նչ սիրուն է ծաղիկով գարուն,
Մեզ հրճուեցնեն երգերն թռչներուն.
Լա լա լա լա լա լա լամ,
Լա լա լա լա լա լա լամ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Բամբ բամբ բամբ բամբ բամբ,
Մերն է այս աշխարհ,
Հոգ, ցաւ չենք զգար:



## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳ

(ԱՂՋԻԿ ՏԱՆԵԼՈՒՆ)

### ՄԻ ԼԱՐ ՄԱՐԻԿ, ՄԻ ԼԱՐ

ԿՈՄԻՏԱՍ Վ.Ի ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԷՆ




(Ձայնանկարութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)



Մի լար մարիկ, մի լար,
Ես ալ վիշի գամ, տուտուս,
Նա նա, նա նա նա նա:
Անկէ տանըհինգ օր
Արկոմըս տի գամ,
Մի լար մարիկ, մի լար:

Մատնուս ակը մաւի է,
Էս ի՞նչ դըժար տարի է,
Տան աղջիկներ, բան բանեցէք,
Կարգըւելու տարի է:

Եկուր երթանք պաղչէն ի վայր,
Պըզտի հարս,
Ես վարդ քաղեմ, դուն ըռահան,
Պըզտի հարս:

Մատնուս ակը մաւի է,
Էս ի՞նչ դըժար տարի է,
Տան աղջիկներ, բան բանեցէք,
Կարգըւելու տարի է.
Կարգըւելու տարի է:





## ՇՈՒՇՕՆ ԵԼԱՒ

ԿՈՄԻՏԱՍ Վ.Ի ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԷՆ




Շուշօն ելաւ կ'երթէր էգին,
Ինք եւ իր շուշտակ տըգեր կին,
Քաղեց գխաղող լեցուց գոգին,
Մարալ Շուշօ, ջէյրան Շուշօ:

Շուշօն ելաւ կ'երթէր մարագ,
Ուր ուտելիք մեղր ու կարագ,
Աչքեր դեղած ունքեր բարակ
Մարալ Շուշօ, ջէյրան Շուշօ:



## ԳԻՆԵՐԳ

Allegro

Խօսք եւ եղանակ՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑԻ



Կարմիր գինիով եղեր եմ գինով,
Երկրիս դառնալուն այժմ եմ ապահով:
Կը կոնծեմ գինին, կ'երգեմ ուրախ, քաջ,
Մէկի դէմ հազար կ'ունենամ պահանջ:
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Բաժակները թող հնչեն,
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Ջի՜ն, չի՜ն, չի՜ն...
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սիրոյ կարմիր կարկաչէն
Թող յիմարները խրտչին:

Կաթիլ մը սփոփանք մի՛ շատ տեսնէք ինձ,
Աշխարհն ունի բիւր հոգեր ու կսկիծ.
Թող մեզ չըզգետնէ բախտին ելեւէջ,
Կեանքն ա՛յս է, այսպէս պիտի գտնէ վերջ:
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Բաժակները թող հնչեն,
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Ջի՜ն, չի՜ն, չի՜ն...
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սիրոյ կարմիր կարկաչէն
Թող յիմարները խրտչին:



## ՄԻ ԵՐԳԵՐ ԻՄ ՍՈԽԱԿ



Մի երգեր իմ սոխակ
Մի երգեր իմ սոխակ,
Պատուհանիս դու տակ,
Պատուհանիս դու տակ.
Արտորա՛ դէպ' Կարին
Սփոփել խեղճ հայերին.
Արտորա դէպ' Կարին
Սփոփել խեղճ հայերին:

Կարինը կը հառաչէ,
Կարինը կը հառաչէ,
Օգնութիւն կը կանչէ,
Օգնութիւն կը կանչէ.
Արտորանք դէպ' Կարին,
Ազատենք հայերին.
Արտորանք դէպ' Կարին,
Ազատենք հայերին:

## ԴԷՊԻ ԴԱՇՏ

Խօսք եւ Երաժշ. Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ

Andante



Հօ՛, ջա՛ն եզներ, ջա՛ն, ջա՛ն եզներ, հօ՜, հօ՜, հօ՜,
Աքլորն կանչէ, լոյսն է բացուեր, հօ՜, հօ՜, հօ՜:

Մսուրներնիդ լեցուն է կեր, հօ՜, հօ՜, հօ,
Կուշտ կուռ կերէք. դուք էք շահեր, հօ՜, հօ, հօ՜:

Առտուան ցօղը հողն է փըխրեր, հօ՜, հօ՜, հօ՜,
Խոփը ճեղքէ հողին խորեր, հօ՜, հօ՜, հօ՜:

Դէ՛հ, շո՛ւտ իջէք գեղին աղբիւր, հօ՜, հօ՜, հօ՜,
Կուշտ փոր խմէք զուլալ պաղ ջուր, հօ՜, հօ՜, հօ՜:

Դէ՛հ, դէպի դաշտ, աշխատանքի, հօ՜, հօ՜, հօ՜,
Ուժ թափ տուէք արօր խոփի, հօ՜, հօ՜, հօ՜:

Ձերն է միայն հալալ վաստակ, հօ՜, հօ՜, հօ՜,
Ցորեն, գարի, կորեկ, վարսակ, հօ՜, հօ՜, հօ՜:

## ԱՍՈՒՄ ԵՆ ՈՒՌԻՆ(*)

Խօսք՝ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Երաժշ. Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ



(*) «Անուշ» օպէրէի այն գոհար կտորը՝ Ա. Տիգրանեանի մշակումով՝ տուած ենք նախապէս: (Տե՛ս Պրակ 13, էջ 111) Հոս կուտանք նաեւ Լ. Նազարեանցի մշակումը՝ որ նոյնպէս հաճելի դաշնաւորում մըն է:



## ԲԱՐԻ, ԳԵՂԵՑԻԿ, ԱՌԱՔԻՆԻ ԸՆԿԵՐԸ ՄԱՐԴՈՒՆ

Գրի առաւ՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆ

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ



Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
Որ փայլեցընէ արեւու պէս պատկերը մարդուն:

Ինչ մարդ ունենայ իր մօտը հաւատարիմ ընկեր,
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն:

Ընկեր եմ ասում, աստուածավախ ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացընէ աստիճանը մինչ վերը մարդուն:

Թշնամիները իր վրայ քաշած ժամանակը,
Կտրին, հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Ջիւան Աշըղ,
Չի սպիտակիլ ամենեւին մէկ հերը մարդուն:

## ՏԻ ԼՈՒ ԼՈՒ

ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԳ

Խօսք՝ ԱԼԱՋԱՆԻ



Քեռին եկաւ մեր բակը,
Տի լու լու, տի լու լու, տի լու լու,
Լիք կընճիռ շալակը,
Տի լու լու, տի լու լու, տի լու լու:

Ուսի թոկը կըտրուեց,
Տի լու լու, տի լու լու, տի լու լու,
Կընճիռն ինկաւ կոտրուեց,
Տի լու լու, տի լու լու, տի լու լու:

## ՇՈՒՇԱՆ

Խօսք եւ Երաժշ. Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ




Սարերը են ծաղկեր,
Կազմեր եմ ես փունջեր,
Տաղերգով բլբուլին,
Շուշաններ կը բացուին,
Գարունին նոր կոչին,
Ծաղիկներ կը ժպտին.
Իմ կազմած փունջիկներ,
Ո՜ն, ուրո՞ւ տամ նուէր:

Ծառերու շուքին տակ,
Կը բուրես գլխահակ,
Ճիւղերու սիւքին թեթեւ,
Կը փրչէ քո վերեւ.
Իմ այրած ճակտիս,
Դու պիտ-պիտ կը նայիս,
Գլուխս հուր, բոց լիք,
Տո՛ւր մի քիչ հով զովիկ:

Զարդարուած ես շուշան,
Նոր հարսի մը նման,
Կանուխս ես արթնցեր,
Հէ՛ք շուշան սիրանուէր,
Հովաբախ կը դառնաս,
Աջ ու ձախ կ'անես նազ,
Քու անուշ աս բուրեն
Իմ քոյեր ուներ են:

Սարերն են ամայի,
Շուշանը ո՞ւր նայի,
Սպիտակ թերթիկներ,
Դէպ ինծի են բացուեր:
Ծառերու շուքին տակ,
Կը խոկամ միս մինակ,
Հէ՛ք շուշան, սրտիս պես
Քեզ գտայ՝ անկեղծ ես:



## ԿԱԼԵՐԳ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



## ԿԱԼԵՐԳ

Հօ՜, ռօ՜լ, օ՜, լօ՜, լօ՜, լօ՜, լօ՜,
Արի՛, արի՛, իմ մատաղ,
Հօ՛, եզը՜, ջա՜ն,
Հօ՜, ռօ՜ւել, հօ՛,
Հօ՜, ռօ՜ւել, հօ՜:

Հա՛, կա՛լ արա՛, ման արա,
Հօ՛, եզը ջա՜ն,
Հօ՜, ռօ՜ւել, հօ՛,
Հօ՜, ռօ՜ւել, հօ՜:

Հա՛, կալը դարման արա՛,
Հօ՛, եզը ջա՜ն,
Հօ՜, ռօ՜ւել, հօ՜,
Հօ՜, ռօ՜ւել, հօ՜,
Յորենն ինձ դարման քեզ,
Հօ՛, եզը ջա՜ն,
Հօ՜, ռօ՜ւել, հօ՛,
Հօ՜, ռօ՜ւել, հօ՜:

Հշանը դարման արա,
Հշանը դարման արա,
Պռէ՛րէ, հօ՛մ, պռէ՛,
Պռէ՛րէ, հօ՛մ, պռէ՛,
Պռէ՛րէ, ջա՜ն:

## ԳՈՒԹԱՆԵՐԳ

Խօսք՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Մշակում՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՅԵԱՆԻ

Andante



Արի՛ գութան, վարի՛ գութան,
Օրն եկել է ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեա՜լ է Աստուած, հօ՜ ռօւել:

Քաշի՛ր, եզը՛, ուսիդ մատաղ,
Քաշի՛ր, քաշե՛նք, վար անենք,
Ճիպտին արա՛, քըշի՛ր հօտաղ,
Մեր սեւ օրին ճար անենք:

Ձեռքըս պակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցանք, Տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված,
Մի տուն լիքը մանուկներ:

Արի՛, գութան, վարի՛ գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեա՜լ է Աստուած, հօ՜ ռօւել:



## ՍԱՅԼԵՐԳ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ALLEGRETTO



Հօ՜լ արա, եզօ՜,
Ջա՛ն, ա՛ղբէր ջա՜ն, հօ՜,
Թօ՜լ արա, է՛զօ,
Ջա՛ն, ա՛ղբէր.

Դէ՛, սիրո՛ւն, է՜լ, է՜լ, է՜լ, է՜լ,
Դէ՛, ծիրա՛ն, է՜լ, է՜լ, է՜լ, է՜լ,
Դէ՜, տո՛կան, է՜լ, է՜լ, է՜լ, էլ, հօ՜:

Հօ՜լ արա, ակը,
Ջա՛ն, ա՛ղբէր ջա՜ն, հօ՛,
Թօ՛լ արա, ակը,
Ջա՛ն աղբէր:

Դէ՜, սիրուն, է՜լ, է՜լ, է՜լ, է՜լ,
Դէ՜, ծի՛րան, է՜լ, է՜լ, է՜լ, է՜լ,
Դէ՜, տո՛կան, է՜լ, է՜լ, է՜լ, է՜լ, հօ՜:

# ՉԵԿԱՒ

## ՁՄԵՌԸ ԱՆՑԱՒ, ԵԿԱՒ ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Խօսք՝ Հ. ԱՄԻՐԵԱՆԻ

Երաժշտ. Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆԻ




Ձմեռը անցաւ, եկաւ նոր գարուն,
Ծառեր, ծաղիկներ ծլան, ծաղկեցան,
Հովիւ իր հօտը քշեց դաշտ, դուրան,
Մինակ իմ կեանքիս չեկաւ դեռ գարուն:

Ցուրտ օրերն անցան, ձիւնը հալեցաւ,
Մարմանդ արօտներ կապեցին չոր դին,
Ծիծառը եկաւ, սոխակն ալ եկաւ,
Բայց չեկաւ գարունն իմ ծաղիկ կեանքին:

Մայիս ամիսը, ծիծաղկոտ, անուշ,
Ամենուն դէմքին կ՚արձակէ ժպիտ.
Սակայն իմ կեանքիս Մայիս մնաց ուշ,
Դէմքս դալկահար, մնաց անժպիտ:

Գարո՛ւն, ա՜յ գարուն, անուշիկ գարուն,
Ժպիտ մ՚ալ ինծի դուն տուր ծիծաղկոտ,
Հերիք ալ մաշուիմ, ներիք օրն ի բուն,
Կեանքիս նոր գարնան քաշեմ ես կարօտ:





# ԼՈՐԻՆԵՐԻ ՏԱԿ

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Երաժշ. Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆԻ




Լորիների տակ
Մտորում եմ լուռ.
Հեռուն մի ջուրակ
Հեծում է տխուր:

Մութի մէջ, ասես,
Իմ բախտի վրայ
Անուշիկ մօր պէս
Արտասուում է նա:

Անողոք մի ձեռք
Ծանրացաւ վրաս,
Փշրեց սէր ու երգ,
Գարուն ու երազ...

Լորիների տակ
Մոռմոքում եմ լուռ,
Հետս մի ջուրակ
Լալիս է տխուր...:



ՏԻԳՐԱՆ ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆ

Տիգրան Չէյթունցեան ծնած է Մարաշ, ուր եւ ստացած է իր նախնական ուսումը: Ապա յաջողութեամբ աւարտած է Մարաշու Ամերիկեան «Academy» վարժարանը, եւ քիչ յետոյ ալ՝ Խարբերդի Գերման «Deutsches Lehrer-Seminar» ուսուցչանոցը: Ընդհ. պատերազմէն առաջ տեսչութեան եւ ուսուցչութեան պաշտօններ վարած է Կիլիկիոյ հայ եւ օտար կրթական հաստատութիւններու մէջ: Այնթապի Կիլիկեան Ճեմարանին մէջ պաշտօնավարած է իբր երաժշտութեան, մանկավարժութեան եւ գերմաներէնի ուսուցիչ: Պատերազմի ընթացքին եղած է պետական պաշտօնեայ, իսկ Զինադադարէն յետոյ 2 ու կէս տարի Տէօրթ Եօլի Բէյլէկեան որբանոցի մէջ իբրեւ աւագ ուսուցիչ պաշտօնավարելէ յետոյ, անցած է Գերմանիա, ապա Եգիպտոս:

Տ. Չէյթունցեան մանուկ հասակէն բնածին ընդունակութիւն եւ մեծ սէր ցոյց տուած է երաժշտութեան համար: Դեռ դպրոցի փոքր աշակերտ՝ սկսած է հեղինակել դպրոցական երգեր, զարմանք պատճառելով իր ուսուցիչներուն: Գերման ուսուցչանոցին մէջ, իրեն գնահատելով իր երաժշտական կարողութիւնը, իրեն յանձնուած են նախակրթարանի բաժնի մէկ մասին երաժշտութեան դասերը:

Չէյթունցեան համերգներ եւ նուագահանդէսներ կազմակերպած է այլ եւ այլ քաղաքներու մէջ, հիացումին եւ գնահատանքին արժանանալով հայ եւ օտար երաժիշտներու: Կատարած է երաժշտական դասախօսութիւններ եւ գրած դպրոցական երաժշտութեան եւ մանկավարժութեան վերաբերեալ յօդուածաշարքեր: Իր ուսանողական եւ ուսուցչական շրջաններուն, այլ եւ այլ առիթներով, Թրքահայաստանի գաւառները պտտած եւ ժողովրդական երգեր հաւաքած է, հարազատօրէն:

Տ. Չէյթունցեան 25 տարիներէ ի վեր նուիրուած է երաժշտութեան եւ մանկավարժութեան: Հետեւած է գործնական երաժշտութեան, ներդաշնակութեան եւ յօրինողութեան, եւ իրեն մասնագիտութիւն ըրած՝ դպրոցական երաժշտութիւնը: Հասցուցած է շատ մը աշակերտներ որոնք այսօր զանազան երկիրներու մէջ ղեկավար երաժիշտներ են: Իր հեղինակած դպրոցական եւ այլ երգերը տարածուած են եւ կ՚երգուին հայ վարժարաններու մէջ: Պատրաստած է «Նոր Մեթոտ Երաժշտութեան» անունով դասագիրքերու շարք մը, որուն առաջին մասը լոյս տեսած է արդէն: Չէյթունցեան ունի նաեւ երաժշտական ուրիշ անտիպ գործեր:

## ԳՈՂԹՆԻ ՔՆԱՐՔ

Խօսք՝ Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԻ




Թէ հայրենեաց պակաղիր
Գողթնի քնարք լռել են,
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պսակել:

Մասեաց գագաթն թող գան բազմին,
Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան,
Հայոց արիւնն հոտոտել:

Փախեք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի ցօղեք ձեր ցօղեր,
Շաւարշանը ողողուած է
Հայոց քաջաց արիւնէն:

Եւ կը ծլին եւ կը ծնին
Այս դաշտին մէջ ոչ խոտ՝ վարդ,
Այլ Վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Թանդակագործ քաջ Եղիշէն
Գրիչ ի ձեռն գայ յԱրտազ,
Զափէ, ձեւէ, գրէ, դրոշմէ
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ:

Ո՜հ Վարդանայ անուան արժան
Մասիս կանգնի մահարձան,
Մենաստաններ խաչն ի գմբէթ,
Աւետարան սուրբ հաւատ:

Ծագէ արեւ քոյդ ճառագայթ,
Խաղտեաց լեռնէն, մութ խորշէն,
Այնտեղ ինկաւ քաջ Հմայեակ,
Այնտեղ պառկեր Նահատակ:

Լուսին, լուսին, աչօք անձուն,
Պահէ Հայոց ոսկորներ,
Եւ Մասիսի զուարթ ցօղով
Ցօղէ անոնց շիրիմներ:

Արծուիք, բազէք Հայաստանի,
Եւ արագիլ ամրան հիւր,
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք Հայոց տուն:

Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակներ շինէք բուն,
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,
Մինչեւ Հայոց գայ գարուն:



## ՀԱՅՐԵՆԻ ԳԱՐՈՒՆ

### ԵՍ ԻՄ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՐՈՒՆԸ Կ'ՈՒԶԵՄ

Երաժշ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԻ

Խօսք՝ Յ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ




Ես իմ աշխարհի գարունը կ'ուզեմ
Զուարթ ու վըսեմ,
Գետակը փրփուր, հովերը կայտառ,
Ծաղիկը պայծառ:

Այս օտար երկրի գարունն է մռայլ,
Ծաղիկը անփայլ,
Արեւը կըրակ, գետակը տըխուր,
Թռչունները լուռ:

Մեր սիրուն ձորի զեփիւռն է քնքոյշ,
Արեւը անուշ,
Ա՜խ, իմ աշխարհի գարնան եմ կարօտ,
Անուշ ու հոտոտ:

# ԳԻՇԵՐ ԲԱՐԻ

## ՄՈՒԹԸ ԿՈԽԵՑ ԱԶՆԻՒ ԾԱՂԻԿ

Allegretto — Խօսք՝ Մ. ՊՈՆՏԱՑԻԻ — Երաժշ. Մ. ԹԻՐԵԱՔԵԱՆԻ




Մութը կոխեց ազնիւ ծաղիկ,
Եւ հանգչելու չունիմ տեղիկ,
Կ՚ուզե՞ս արդեօք զիս ընդունիլ։
Ծաղիկն ըսաւ. «Եկուր բըզեզ,
Ես իմ ծոցըս կ՚ընդունիմ քեզ»։
Գիշե՜ր բարի, գիշե՜ր բարի...։

Թռչնիկները դողդըղալով,
Ըսին, «Մայրի՛կ, հասիր շուտով,
Ա՜խ, շո՛ւտ հասիր, պիտի սառինք։»
Մայրիկն ըսաւ. «Ահա եկայ,
Թեւերուս տակ մտէք հիմայ։»
Գիշե՜ր բարի, գիշե՜ր բարի...։

Իր դռնակը գոցեց ծաղիկ,
Եւ թեւերով ծածկեց մայրիկ
Իր դողդոջուն ձագուկները.
Մեղմիկ հով մը գալով խոլոյն՝
Կը տատանէր ծաղիկ եւ բոյն.
Գիշե՜ր բարի, գիշե՜ր բարի...։





# ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻՆ

## Օ՜Ն, ԹՈՂ ԶԱՐՆԵՆ ՔՆԱՐ, ՀՆՉԵՑՆԵՆ ՇԵՓՈՐ

Երաժշ. Տ. ՋԷՅԹՈՒՆՑԵԱՆԻ

Խօսք՝ ԱԿԻԼԻՆԷԻ




Օ՜ն, թող զարնեն քնար, հնչեցնեն շեփոր,
Եւ կազմեն գունդ գունդ զուարթունք պափոր,
Զի տօն է այսօր անուան մեծ Նուպարին,
Մենք ալ միանանք երկնային պարին։

Ապրի՛, ապրի՛ յաւէրժ անունն Պօղոս Նուպար,
Վեհ սիրոյ, գութի նըշմարիտ տիպար,
Կեցցէ՛, կեցցէ՛ յաւէտ թող իր քաղցր յիշատակ
Մեր սրտերուն մէջ, այս սուրբ յարկին տակ։

Յիշենք գովութեամբ միշտ գործերն իր բարի
Եւ կեանքը վսեմ, անձնուէր, արի,
Հայկայ սերունդին օրինակ դարէ դար,
Անունն անմոռաց պանծայ անդադար։

Ապրի՛, ապրի՛ յաւէրժ անունն Պօղոս Նուպար,
Վեհ սիրոյ, գութի նըշմարիտ տիպար,
Կեցցէ՛, կեցցէ՛ յաւէրժ թող իր քաղցր յիշատակ
Մեր սրտերուն մէջ, այս սուրբ յարկին տակ։

## ԳՆՁՈՒ ԱՂՋԻԿ

Խօսք եւ Երաժշտ. Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ




Հիւսեմ կողով, ուռիներու ճիւղերով,
Զմրուխտ հագած առուակներու եզրին քով,
Դունէ ի դուռ տանիդ համար թափառիկ,
Աչերովդ տեսեր դիւթես ինչպես զիս:

Դու ման կուգաս գաղտնագողի ու ծպտուն,
Նայուածքովդ բայց կը մատնես միշտ քեզ դուն,
Քո աննման խորհրդաւոր աչեր վառ,
Հայելի են անկեղծ սրտիդ սիրավառ:

Ալ բո՛ղ, աղջիկ, պատրանքի այդ խօլ ձեւեր,
Բոյն մը շինենք, թափառ կեանքիդ վերջ մը բեր.
Ալ մի՛ երգեր, մի՛ հնչեցներ ճիկ, ճիկ, ճիկ,
Սիրտս վանդակ, հոն դու երգէ, պլպուլիկ:



## ԽԱՒԱՐԵԼ ԵՄ

Խօսք՝ Ս. ՇԱՀԱԶԻԶԻ




Խաւարել եմ որպես գիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ.
Չունիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր,
Ես սիրում եմ իմ հայրենիք:

Այնտեղ անթիւ անբաղդ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես շատ ու շատ փոխուել եմ.
Ա՛ռ թաշկինակդ սրբիր աչերդ,
Ես քեզ սիրել կարող չեմ:

Մնա՛ս բարեաւ, իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Արդ արտասուք ես պիտ՝ թափեմ
Որ իմ ցաւերս ըսփոփեմ:

Ա՛խ, տուէք ինձ մի քաղցր քուն,
Կեանքից հեռու սլանամ,
Այն աշխարհը՝ ուր խնդութիւնն
Ու սէրն է միշտ անպառամ:



# ՍԵՒԱՒՈՐ ԱՂՋԻԿ

Երաժշտ. Գ. Մ. ԱԼԵՄՇԱՀ









Բեա սեւ սեւաւոր աղջիկ
Արի զքի տամ Վանայ խօշին.
Վանայ խօշէն զքի դրնի
Նրխռուն օտեն,
Ծամ փեններեն,
Ոտներդ քեաչի
Թուխ կօնտուրեն:

Զօչ քեազախկին ծակ քօլօզին
Բօլզի փոռուն լեն ճակտին,
Կամար օնքուին, թուխ աչքերին,
Շաքրոս բերնին, մեղրոս լեզուին,
Մազոս դոշին կեա պանակին
Նախրափետին պօզ պեխերին,
Չառոխքերին սին թելերին:

Սախսօն էլներ սարեր ման գեր,
Հե՜յ նե՜յ կանչեր, նո՜յ նո՜յ ասեր,
Ջուր էվլարին ծառներ տուն գեր,
Ալմօն եներ
Գանձիկ մանձիկ,
Դրներ գրլխին
Աներ բարծիկ:



# ՊԵՏՈՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## ԳԱՐԱՀԻՍԱՐ ԼԵՐԱՆ ԿՐԾՔԻՆ



Գարահիսար լերան կրծքին՝
Նա էլ ընկաւ վիրաւոր,
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած,
Զար թշնամու գնդակով:

Ժեռոտ լերան լերկ կատարից
Վա՛ր սըլացիր, սեւ արծի՛ւ,
Թեւերդ բաց, լայն թեւերդ,
Ու ջիւանուն հո՛վ արա:

Խոցուած սրտից մուգ արիւնը,
Կաթիլ-կաթիլ կը ծորայ...
Ա՜խ, ջիւանու կեանքն է հոսում
Յաւոտ կրծքի լայն վերքից...

Ժեռոտ լերան լերկ կատարից
Վա՛ր սըլացիր, սեւ արծիւ,
Թեւերդ բաց, լայն թեւերդ
Ու ջիւանուն հո՛վ արա...





# ՊԱՐԶԻ՛Ր ԱՂԲԻՒՐ




Պարզի՛ր աղբիւր, քըրդի տըղին ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, բեկի տըղին ջուր տանեմ:

Աղբի՛ւր գիտե՞ս, Քիւրդը մեզի ի՞նչ կ'անէ,—
Կը կողոպտէ, կը հալածէ, կը սպաննէ:

Աչքըս բացի՝ սուգ ու շիւան ես տեսայ,
Նամերդ Քիւրդին, ո՜հ, զոհ գնաց իմ փեսայ:

Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,
Մեր սեփական թագաւորներ ունէինք:

Գահ ու փառքից, ազատ կեանքից զրկուեցինք,
Արիւնարբու թշնամու ձեռք մատնուեցինք:

Աղբի՛ւր, հիմա սեւն է պատեր մեր աշխարհ,
Զուլում,զուլո՜ւմ,ջարդ ու սարսափ ու խաւար:

Գե՛հ, շուտ պարզի՛ր, բեկի տըղին ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, խան Մուրադին ջուր տանեմ:



## ՕՐՕՐ




Ննջիր մանկիկ իմ սիրասուն,
Օրօր եմ ասում,
Պայծառ լուսինն է մեղմ հայում
Քո օրօրոցում:

Այն օրուանից երբ հայրդ ընկաւ
Վատի գնդակից,
Պայծառ լուսինն էլ խաւարաւ
Անարդար գործից:

Արիւնթաթախ հայրդ խանութից
Տարան գերեզման,
Այնտեղ տուին շինուած հողից
Մի հանգստարան:

Բայց նա չունի ոսկորներին
Մի փոս առանձին,
Ժողված միատեղ թաղեցին,
Բոլոր Հայերին:

Ննջիր մանկիկ իմ սիրասուն,
Օրօր եմ ասում,
Պայծառ լուսինն է մեղմ հայում
Քո օրօրոցում:

## ՀՐԱՒԷՐ ՊԱՐԻ

Ad Libitum



Հէ՜յ ջան տղերք Մասիս սարի
Արտերում մէջ հասկերն են ոսկի.

Հէ՜յ ջան տղերք դէ՛ պար բռնենք,
Ժամ է պարի, հո՜յ հո՜յ հո՜յ:



## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Խօսք՝ ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆԻ

Ձայնագրեց՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆ




Էն սեւ գիշերում, տուման տարտերի,
Փրփրած ծովում ինկանք ու մեռանք.
Ա՜յ, իմ ազիզներ, տաղուած սրտերի,
Նամա՞ն օրերի դուք յոյս երկնառաք:

Ծփուն ալիքներ փրփուր թեւերով,
Ի՞նչպես սիրտ առին ու ձեզ կուլ տուին.
Ա՜յ, իմ ազիզնե՛ր, որ էն մեծ ցաւով
Դուք ճամբայ ինկաք Մուրազի ափին:

Էն վառ փարոսը որ դուք վառեցիք
Տարտերի ծովի մութ դէմքի վրայ,
Լոյս է տարածում, ...անցնում են մարդիկ՝
Ու՛ր առաջինը դուք բացիք ճամբայ:

Ես ձեզի չեմ լայ... տուժանը թող լայ,
Էն ղուլ օրերի գետնաքարշ ընկեր:
Ես ալ, ազիզնե՛ր, ձեր ճամբին ինկայ,
Թողած լոյսերիդ շողերն եմ գրկեր...:

## ՏԸԼԷ ԵԱՄԱՆ

ՎԱՆԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ




Տըլէ եաման. Արեւն առեր
Վանայ ծովին,
Տըլէ եաման. Ես քեզ սիրի
Աշնան հովին,
Եաման, եաման,
Հէ՜յ:

Տըլէ եաման. Վարդ բացուեցաւ
Քաղել չի կայ.
Տըլէ եաման. Եարս բարակ էր,
Սեղմել չի կայ:
Եաման, եաման,
Հէ՜յ:

Տըլէ եաման. Լուսինն ելաւ
Էս գիշերին,
Տըլէ եաման. Եարս տեսայ
Կէս գիշերին,
Եաման, եաման,
Հէ՜յ:

Տըլէ եաման. Արի երթանք
Սարն ի սէյրան,
Տըլէ եաման. Քէ տանող ի
Տընիկ վէրան,
Եաման, եաման,
Հէ՜յ:

Տըլէ եաման. Եարս պզտիկ է
Սիրել չը կայ,
Տըլէ եաման. Ծաս խորոտ է
Պաչել չը կայ,
Եաման, եաման,
Հէ՜յ:



# ՀԵՐՈՍ ԱՆԴՐԱՆԻԿ

## ՀԵՐՈՍ ՄՌՆՉԵՑ, ՍՈՒԼԹԱՆ ԴՈՂԴՈՂԱՑ

(ԿԱՄԱՒՈՐԻ ԵՐԳ)

Գրի առաւ՝ Տ. ՁԷՅԹՈՒՆՑԵԱՆ




Հերոս մռընչեց, Սուլթան դողդողաց,
Թշնամույն աչքեն արտասուք ցոլաց,
Սուրը թշնամույն կուրծքի շողշողաց,
Կռուի սիրահար հերոս Անդրանիկ:

Դուն պէտք է փրկես ամբողջ Հայաստան,
Կարին, Մուշ, Սասուն, մայրաքաղաք Վան,
Տիգրանակերտից մինչեւ Շաւարշան,
Տիրեց մեզ համար հերոս Անդրանիկ:

Պարզենք դրօշակ տեսնէ Եւրոպան,
Թող բացագանչէ կեցցէ՛ Հայաստան,
Կեցցե՛ս դու յաւէտ հերոս հայկական,
Հայոց ղեկավար հերոս Անդրանիկ:

Մշտական դու ես մեր փառքն ու պարծանք,
Դազան թշնամույն ցոյց տուող տանջանք,
Քեզ համար պէտք է կատարել մաղթանք,
Հայոց ղեկավար հերոս Անդրանիկ:

# ԱՌԱՒՕՏՈՒՆ ԲԱՐԻ ԼՈՒՍ

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.








## ՆՈՐԱՓԵՍԱՅ

Առաւօտուն բարի լուս,
Աստուած պահէ ամէնուս,
Թող դուս գայ լուս բրճամուս,
Լորի՜կ, լորի՜կ, լորի՜կ, լորի՜կ, լորի՜կ,
Թող դուս գայ լուս բրճամուս, լորի՜կ,
Լոր իմ, լորի՜կ, սիրուն լորի՜կ,
Լորի՜կ, լորի՜կ, լոր իմ լորի՜կ,
Լո՛ր իմ լուս լորի՜կ:

## ՆՈՐԱՀԱՐՍ

Հազա՛ր երնեկ է՛ն աւուր —
Տավլուլ-զուռնա չալեցուցին,
Կանաչ-կարմիր հագեցուցին,
Տարան ժամը կայնեցուցին,
Աւետարան կարդացուցին,
Ձեռք ձեռին տուեցուցին,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ:

## ՆՈՐԱՓԵՍԱՅ

Լո՛ր իմ, լորի՜կ, սիրուն լորի՜կ,
Լորի՜կ, լորի՜կ, լո՛ր իմ, լորի՜կ,
Լո՛ր իմ, լուս լորի՜կ:

Առաւօտուն բարի լուս,
Բարեւ տաս բարեւուս,
Բարին հասնէ արեւուս:
Լորի՜կ, լորի՜կ, եւլն.:

Առաւօտուն բարի լուս,
Արեւն ելաւ սարի ուս,
Արի՛ երթանք դարի դուս:
Լորի՜կ, լորի՜կ, եւն.:

Առաւօտուն բարի լուս,
Աստուած պահէ մեր երկուս,
Լո՛ր, ոսկի սուն իմ հոգուս:
Լորի՜կ, լորի՜կ, եւայլն:

# ԱԼԱԳԵԱԶԻՆ

## ՍԵՒ ՄՈՒԹ ԱՄՊԵՐ ՃԱԿՏԻԴ ԴԻԶՈՒԱՆ

Խօսք՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Եղանակ. ՍՊ. ՄԵԼԻՔԵԱՆԻ




Սեւ մութ ամպեր ճակտիդ դիզւած,
Դուման հազար, Ալագեա՛զ,
Արտումս արեւ էլ չի ծագում,
Սիրտս է՛լ դուման, Ալագեա՛զ:

Զառ փէշերդ անցայ, տեսայ,
Առանց դարդի սիրտ չը կայ,
Ա՜խ, իմ դարդըս, ջա՛ն Ալագեազ,
Իմ դարդի պէս դարդ չը կայ...

— Է՜յ, Մանրաշի նըշխուն հաւքե՛ր,
Իմ դարդը, որ ձերն էղնէր,
Ձեր էդ զա՛ռ-վա՛ռ, խաս փետուրներ
Կը սեւնային, հանց գիշեր:

— Է՜յ, Մանրաշի մարմանդ հովե՛ր,
Իմ դարդըս որ ձերն էղնէր,
Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
Թոյն ու տօթի կը փոխուէր:

Հե՛յ վա՜խ... կոտրան իմ թեւերս,
Ընկայ գիրկդ, Ալագեա՛զ.
Ա՜խ, մեծ սըրտիդ սեղմեմ սիրտըս,
Լամ, արուն լամ, Ալագեա՛զ...



# ՔԸՐԴԻ ԱՂՋԻԿ

Ձայնագրեց՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆ




Քըրդի աղջիկ կայնի խաղա,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ,
Քըրդի աղջիկ ճախրակ մանի,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ:
Քըրդի աղջիկ նըստի խաղա,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ,
Քըրդի աղջիկ թոնիր վառի,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ:

Քըրդի աղջիկ ալիւր մաղի,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն լէ, լէ, լէ,
Քըրդի աղջիկ խըմոր արա,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն լէ, լէ, լէ:
Քըրդի աղջիկ հացը թըխի,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ,
Քըրդի աղջիկ լըւաց արա,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ:

Քըրդի աղջիկ գըլուխ լըւա,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ,
Քըրդի աղջիկ մազեր սանտրի,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ:
Քըրդի աղջիկ խոպոպ արա,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ,
Քըրդի աղջիկ սիրտըս մըրկի,
Վա՜յ, լէ, լէ, լէ, ջա՜ն, լէ, լէ, լէ:

ԾԱՆՕԹ.— Այս ժողովրդային եղանակը կ'երգուի Հայաստանի շատ մը գաւառներուն մէջ զանազան փոփոխակներով: Վերի եղանակը լեռնային Կիլիկիոյ մէջ երգուածն է:

## ՇԻՐՄԱՋՈՒ ԵՐԳ

(ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ, ԽՄԲՈՎԻՆ)

### ՈՐ ԴՈՒ ԵԼՆԵՍ ԽԵՐԱՆՑ ԽԸՌՈՎ

ՎԱՆԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ




ՀԱՐՑ

Որ դու ելնես խերանց խըռով,
Խերանց խըռով, ի լի լի, տի լի լի։

ՊԱՏԱՍԽԱՆ

Ես էլ կ'ելնեմ նուր նուր խաղող,
Կախուիմ բըփով,
Կախուիմ բըփով, ի լի լի, տի լի լի։

ՀԱՐՑ

Որ դու ելնես նուր նուր խաղող,
Կախուիս բըփով, ի լի լի, տի լի լի։

ՊԱՏԱՍԽԱՆ

Ես էլ կ'ելնեմ սուր սուր դանակ,
Գամ քեզ կըտրեմ,
Գամ քեզ կըտրեմ, ի լի լի, տի լի լի։





## ԵՐԵՒԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՌԵԼ

Մշակում՝ Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑի



Երեւան բաղ եմ առել,
Նեյնիմ ամա՜ն, նեյնիմ ամա՜ն, նեյնիմ ամա՜ն,
Ջիգեարըս դաղ եմ արել,
Բոյիդ մեռնիմ սարի աղջիկ,
Սիրուն աղջիկ,
Սարի մարալ,
Ջեյրան աղջիկ։

Տօպ ու դուշմանի միջին,
Նեյնիմ ամա՜ն, նեյնիմ ամա՜ն, նեյնիմ ամա՜ն,
Լացըս ծիծաղ եմ արել,
Բոյիդ մեռնիմ սարի աղջիկ,
Սիրուն աղջիկ,
Սարի մարալ,
Ջեյրան աղջիկ։

Կանգնել եմ գալ չեմ կարող,
Նեյնիմ ամա՜ն, նեյնիմ ամա՜ն, նեյնիմ ամա՜ն։
Լըցուել եմ լալ չեմ կարող,
Բոյիդ մեռնիմ սարի աղջիկ,
Սիրուն աղջիկ,
Սարի մարալ,
Ջեյրան աղջիկ։

## ՀՈ՛Վ, ՀՈ՛Վ, ՀՈ՛Վ ԼԻՆԻ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ






## ՀԱՄԵՐԳ

Խօսք՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Երաժշ. Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ




Վըտակը ժայռից ներքեւ է թըռչում,
Թափ առած ընկնում քարերի գըլխին,
Զարկւում աւազին, շաչում է, նըչում,
Ճըչում անհանգիստ փըրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին, ձենով պառաւած,
Ձայնակցում է ժիր թոռնիկին երգին,
Այնպէս է ծերուկ անտառը կամաց,
Արձագանգ տալի ջրի աղմուկին:

Այն ինչ բընութեան զուարթ համերգի,
Ունկընդիրն անխօս ու յաւէրժական,
Ժայռը մըտախոհ՝ իր մըռայլ մըտքի,
Նստեւից ընկած լըսում է նըրան:

## ՀՈ՛Վ, ՀՈ՛Վ, ՀՈ՛Վ ԼԻՆԻ

Հո՜վ, հո՜վ, հո՜վ լինի,
Նարխս սունըր ծով լինի,
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Նարոս քամարով լինի:
Դէ՛ զանէ՛ք, զանէ՛ք, հողը հանէք,
Մեր թրշնամու գողը հանէք:

Ծաղիկ ես ծաղկանց միջին,
Հո՜վ, հո՜վ, հո՜վ լինի,
Մի հաս ես աղջկանց միջին,
Նարխս սունըր ծով լինի,
Եա՛ր, ինձ պարգեւս արա,
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի.

Իմ ընկեր մարդկանց միջին
Նարոս քամարով լինի:
Դէ՛, զանէ՛ք, զանէ՛ք, հողը հանէք,
Մեր թրշնամու գողը հանէք:

Արի՛ մի փարպար խաղանք,
Տընկող մըրնանք չը կաղանք,
Հարսանիքից ալիւրը
Մուղն ու ուլսից վաղ աղանք:

Իրար հետ բաղը գրնանք,
Ուտենք, խմենք լիանանք,
Թշնամու աչքը հանենք,
Մեր Աստծուց գոհանանք:

# ՕՐՕՐ

(ՇԱՔԷԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

## ՔՆԻՐ ԻՄ ՍԻՐՈՒՆ ՀՐԵՇՏԱԿ

ՀԱՅ ԳՈՒՍԱՆ




(Ձայնագրութեան շարունակութիւնը եւ բառերը տեսնել յաջորդ էջին վրայ)





Քնիր իմ սիրուն հրեշտակ,
Քնել են գառն ու բրոչնակ,
Լռել են պարտէզ ու մարգ,
Մեղուներ մտել փեթակ,

Փայլում է լուսնակն արծաթ,
Իր շողն է կաթում վերադ,
Քնիր արծաթ շողի տակ,
Քնիր ոսկէ հողի տակ,
Սիրուն հրեշտակ:

## ԷՍ ՕՐ ՆՈՐԸ ՆՈՐԵԼ Է

Եռաձ. ՅԱՐ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ




Էս օր նորը նորել է,
Նորել է բոլորել է.
Նա՛ր քո լուսնակ երեսից՝
Իմ սիրտը մոլորել է:

Քան լուսինն ամպի տակով՝
Դու ջուր կ'երթաս դրակով,
Հոգիս քեզ մատաղ լինի,
Սիրտս կ'երես կրակով:

# ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Խօսք՝ Ք. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ

ԻՐԼԱՆՏԱԿԱՆ ԵՐԳ




Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին զարդ,
Նա քեզ հանեց իւր կրծքից,
Ինձ պարգեւեց, վերջին վարդ:

Մանկութեան ոսկէ ժամերն,
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ
Դու ես միայն վերջին վարդ:

Շատ չի տեւել՝ կը բացուի
Առաջիս սեւ գերեզման,
Ես աշխարհէս միայն քեզ
Հետս կ'առնում, վերջին վարդ:

Գարնան օրերն անցել են,
Տօթ ամառն է ինձ եռում,
Միշտ սպասում եմ քո տեսքին,
Դուն ամառուայ վերջին վարդ:

Երջանիկ կեանքիս օրերը,
Ցաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք,
Միտքս բերիր, վերջին վարդ:



# ՃԱՄԲԱՆ

Խօսք՝ Ր. ԶԷՔԻՃԵԱՆԻ

Երաժշտ. ՍԵՊՈՒՀ ՇԱԼՃԵԱՆԻ




Մայրիներու անտառն ի վար
Երգի մը պէս կը սարսըռար
Ճամբան ներմակ, ճամբան ոլոր,
Ուրկէ կուգար ան ամէն օր:

Ճամբի ափին մայրամուտին
Կը սպասէի ես հեշտագին
Դարձին անոր ճամբէն ոլոր,
Ճամբէն ոլոր, իղձ հեռաւոր:

Ու կուգար ան հովիտներէն
Ուր ողկոյզներ սէր կը բուրեն,
Ու կը հոսին գէսերն ոսկի
Երբ լուսընկան ջինջ կը ծաղկի:

Ու կը պատմէր գիշերն երկար,
Ինչ որ կ'անցնէր հովիտն ի վար,
Ուր ողկոյզներ սէր կը բուրեն
Երբ լուսընկան ծաղկի վերեն:

## ԳԱՐՆԱՆ ՀՄԱՅՔԻՆ

Tempo di Marcia

Երաժշ. ՍԵՊՈՒՀ ՇԱԼՃԵԱՆԻ



Եկէք մենք հպարտ քալենք կեանքին մէջ,
Չասենք այլ սիրենք կ'անցնի կեանքն արագ,
Սէրս խար եաշ է երգս զուռնաւոր,
Ճամբան արեւ է, ծառին սակ բոսուեր.
Եկէք թիթեռներ սաւէք զիս ձեզ հետ
Կապոյտ հեռուներ անսահման հորիզոն:

Եկէք մենք հպարտ քալենք կեանքին մէջ,
Չասենք այլ սիրենք կ'անցնի կեանքն արագ·
Մինակ հոլին մէջ ծառն է դալարուն,
Կուլայ մեղմօրէն ձայն մը հովին մէջ.
Ծառեր քափեցէք ծաղիկ թերթ առ թերթ,
Հոգիս կը փարի գարնան հմայքին:



# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԳ

## ԳԱՑԷ՛Ք ՏԵՍԷ՛Ք Ո՞Վ Է ԿԵՐԵԼ ՁԷԹ

ԿԱՐԱ ՄՈՒՐԶԱ




(Ծանուցանութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)



(Բառերը տեսնել յաջորդ էջին վրայ)



## ԷՍ ՕՐ ՄԵՐ ՏԷՐՏԷՐ ԶԻԿ ԱՍԱՑ

ՎԱՆԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ




Էս օր մեր տէրտէր զիկ ասաց,
Ի՜նչ խորոտիկ ձեռներ մ'ունես:
Ես ալ մեր տէրտրոջն ասացի,
Ձեռնոց մը պէ տրնեմ ինէ:

Էս օր մեր տէրտէր զիկ ասաց,
Ի՜նչ խորոտիկ աչքեր մ'ունես:
Ես ալ մեր տէրտրոջն ասացի,
Տեղ տեր մը պէ տրնեմ ինէ:

## ԳԱՑԷ՛Ք ՏԵՍԷ՛Ք Ո՞Վ Է ԿԵՐԵԼ ԶԷԾ

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել զէծ,
—Գացին, տեսան, գէլն է կերել զէծ:
Գէլն ըզիծուն,
Էծն ըզտիկուն,
Տիկ զարեւուն,
Հա՛լալ է, կրմօ, հալալ է,
Հալալ է, ջամօ, հալալ է:
Էս ի՞նչ քեաթուր դարու հասանք, հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ստացանք, հալալ է:
Դէ՛ն, գրնա՝ կիգամ, դէ՛ն գրնա՝ կիգամ,
ռուտ կիգամ,
Կարմիր սօլերս հագնիմ, կիգամ, ռուտ կիգամ:

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել զգէլ,
—Գացին, տեսան արջն է կերել զգէլ·
Արջն ըզգէլուն,
Գէլն ըզիծուն,
Էծն ըզտիկուն,
Տիկ զարեւուն,
Հա՛լալ է, կրմօ, հալալ է,
Հալալ է, ջամօ, հալալ է:
Էս ի՛նչ քեաթուր դարու հասանք, հալալ է,
Էս ի՛նչ խըտար կրմօ ստացանք, հալալ է:
Նազ մի՛ աներ, նազ մի՛ աներ, նազ աղջիկ,
Մինքանովդ բոզ մի՛ հաներ հայ աղջիկ,
—Նազ կու էնիմ կու, նազ կու էնիմ կու,
Նազ կու էնիմ, նազ կու էնիմ, նազ տղայ,
Մինքանովըս բոզ կու հանեմ, հայ տղայ:
Խորոտիկ, խորոտիկ,
Խորոտիկ-մորոտիկ իմ եարն է:

Գացէ՛ք, տեսէ՛ք ո՞վ է կերել զարջ,
—Գացին, տեսան առիւծն է կերել զարջ·
Առիւծն զարջուն,
Արջն զգէլուն,
Գէլն ըզիծուն,
Էծն ըզտիկուն,
Տիկ զարեւուն,
Հա՛լալ է կրմօ, հալալ է,
Հալալ է, ջամօ, հալալ է:
Էս ի՞նչ քեաթուր դարու հասանք, հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ստացանք հալալ է:
Ծառը ես եմ, բարը դու ես Աննա ջան:
Սըրտով սիրած եարըս դու ես Աննա ջան:
—Ծառը դու ես, բարը ես չեմ, հայ տղայ,
Սըրտով սիրած եարըս դու չես հայ տղայ:
Խորոտիկ, խորոտիկ,
Խորոտիկ-մորոտիկ իմ եարն է:
Գիրգորն եմ, Գիրգորն եմ,
Ձեր մայլեցի Գիրգորն եմ.
Խորոտիկ, խորոտիկ,
Խորոտիկ-մորոտիկ իմ եարն է:

# ԱՐԵՒԴ ՕՐ ՍԻՐԵՄ ԵԱՐ

## (ՊԱՐԵՐԳ)

Խօսք՝ Գ. ՎԱՀԱՆԵԱՆԻ — Երաժշ. Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ




Պարտէզին շուքերն երկար
Քնացողին զովարար,
Երազիս մէջ քեզ տեսայ
Արթնցայ եա՛ր, դո՛ւ եկար:
Արեւդ օր սիրեմ եա՛ր,
Արեւը տաս մի կենար,
Տուֆիդ վար իյնալուն,
Իմ սիրտս չի դիմանար:

Հեռու տեղեր մի երթար,
Չի կորիս, մեծ է աշխարհ,
Յետոյ քեզ գտնողին ես,
Աշխարհն ալ տամ, ես չի տար:
Արեւդ օր սիրեմ եա՛ր,
Արեւը տաս մի կենար,
Տուֆիդ վար իյնալուն,
Իմ սիրտս չի դիմանար:

Վարդ թաղելէն կուգաս եար,
Ձեռքդ են մտեր փուշեր չար,
Վարդէն փուշով վար էիր,
Հիմա լման վարդ եղար:
Արեւդ օր սիրեմ եա՛ր,
Արեւը տաս մի կենար,
Տուֆիդ վար իյնալուն,
Իմ սիրտս չի դիմանար:

Թասը ծովն ալ նետեն եար,
Թասէն էվէլ չի լենար,
Հոգիս դրախտն ալ տանին,
Քեզմէ զատ բան չի ցանկար:
Արեւդ օր սիրեմ եա՛ր,
Արեւը տաս մի կենար,
Տուֆիդ վար իյնալուն,
Իմ սիրտս չի դիմանար:

Թոնրի տան մէջ տեսայ եար,
Նոր եփած հացերն հազար,
Բայց մէկ հատ քեզ պէս կարմիր,
Եւ ինձ պէս այրած չկար:
Արեւդ օր սիրեմ եա՛ր, եւլն.:



# ՆԱՆԻ՛, ԲԱԼԱ՛

Երաժշ. Գ. ՍԻՒՆԻԻ




Նանի՛, բալա՛, նանի՛, նանի՛, նանի՛,
Նանի՛, ձագուկ, նանի՛, նանի՛, օրօր:
Նանի՛, բալա՛, նանի՛, նանի՛, նանի՛,
Նանի՛, ձագուկ, նանի՛, նանի՛, օրօր:

Ալիւր մաղենք, հես ընենք,
Կրակ վառենք լիս ընենք,
Տան լակոտին դուս ընենք:
Բալա՛, նանի՛, նանի՛, օրօր:

Նանի՛, բալա՛, նանի՛, նանի՛, նանի՛,
Նանի՛, ձագուկ, նանի՛, նանի՛, օրօր:
Նանի՛, բալա, նանի՛, նանի՛, նանի՛,
Նանի՛, ձագուկ, նանի՛, նանի՛, օրօր:

## ԴԺՈԽՔ ՀՐԱՅՐԻ ԵՐԳԸ

Tempo di Marcia

Ձայնագրեց՝ Տ. ՁԷՅԹՈՒՆՑԵԱՆ



Գերեզմանիս քող արձանին վրայ,
Գրեն, յաղթութեան, թէ կոթող է սա,
Թող տեսնէ Հայաստան,
Թող կարդան հայ քաջեր,
Տեսնեն իւրեանց ընկեր,
Նահատակ է պառկեր,
Ծոցն Հայաստանի:

Անձնուէր եւ քաջ Ղազարեանի պէս,
Ցուցնեն քաջութիւն քաջ Արմէնի պէս,
Գալարին աղիքներ,
Թափին զաղջ արցունքներ,
Տեսնեն իւրեանց ընկեր,
Նահատակ է պառկեր,
Ծոցն Հայաստանի:

Յուսով եմ կրնքած աչացս վերջին քուն,
Տեսնէ Հայաստան իւր ազատութիւն,
Իմ գերեզմանիս քով
Թող կայնին ու ձայնեն,
Ահա՛ ազատութիւն,
Եւ ահա՛ փրկութիւն,
Քաղցր Հայաստանի:

Հանգչին ոսկորներ մէջ իմ տապանին,
Տեսնեն փրկութիւն Մայր-Հայաստանին:
Այն ատեն թող կնքեն,
Իմ գերեզմանիս վեմ,
Ազատ դրօշակներով,
Հայու զինուորներով,
Ցնծայիներով:

## ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Խօսք՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Երաժշ. Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ

Andante





## ՀԱՅՐԵՆԻՔ

Allegretto

Ձայնագրեց՝ Տ. ՁԷՅԹՈՒՆՑԵԱՆ



Թէ զիս կանչեն օտարաց,
Արքայական պալատում,
Այլ կը սիրեմ հայրենիք,
Ուր որ լինեմ ես բանտում:
Կ՚ասեմ անդադար՝
«Այլ ո՞ւր կայ տեղ քաղցրիկ
Մարդուն քան իւր հայրենիք»
Կ՚ասեմ անդադար:

Թէ զիս կանչեն թագաւոր
Ըլլալ մի օտար երկրի,
Այլ կը սիրեմ հայրենիք,
Ուր եւ լինեմ ես գերի:
Կ՚ասեմ անդադար, եւայլն:

Թէ ինձ մի օտարի ձեռք
Տայ փունջ մի լեցուն ծաղիկ,
Ձեմ առնէր, զի մեր երկրի
Փուշն է քան զայն գեղեցիկ:
Կ՚ասեմ անդադար՝
«Այլ ո՞ւր կայ տեղ քաղցրիկ
Մարդուն քան իւր հայրենիք»
Կ՚ասեմ անդադար:

Թէ ամենեն ոսկեփայլ,
Երկրի մը լինեմ բնակիչ,
Այլ կ՚երազեմ հայրենիք,
Իր սեւ բախտով մահակեզ:
Կ՚ասեմ անդադար, եւայլն:

## ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մէջ,
Առաս ու անփոյթ,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
Կեղեւը կապոյտ:

Նրանից յետոյ աչքս բաց արի,
Մի փոքրիկ բնում,
Տեսայ՛ աշխարհքը յարդից է շինած,
Ու մայրս է շինում:

Մի օր ալ բնից գըլուխըս հանած,
Նայում եմ դես դեն,
Տեսնեմ՝ աշխարհքը տերեւից շինած,
Մեր բոյնը վրէն:

Հիմակ թռչում եմ հեռո՜ւ, շատ հեռո՜ւ,
Ամէն տեղ գընում,
Բայց թէ աշխարհքը ինչից է շինած,
Էլ չեմ հասկընում:

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԷՋԸ

# ԲԱՐԻ ՀՐԵՇՏԱԿ

Ձայնագրեց՝ Տ. ՁԷՅԹՈՒՆՑԵԱՆ




Բարի հրեշտակ մ'այս առտու,
Թռչըտելով անկողնիս մօտ,
«Փըսփսուն, զուարթ մանկիկ» ըսաւ,
«Ե՛լ եւ երգէ՛, Քրիստոս յարեաւ»:

Սիրտս լեցուած սուրբ հրճուանքով,
Ես ալ կ'երգեմ թեեւ թոթով,
Բայց մանկական անուշ լեզուաւ,
Քրիստոս յարեա՜ւ, Քրիստոս յարեա՜ւ:

Եւ կը լսեմ ահա այսօր,
Մարդիկք, հրեշտակք, աշխարհ բոլոր,
Կ'երգեն անուշ եղանակաւ,
Այս աղուոր երգն, Քրիստոս յարեա՜ւ:





# ՍԱՍՈՒՆ

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՌ ՎԱՇՏԵՐԸ ԿԱՏԱՂԻ

Ձայնագրեց՝ Տ. ՁԷՅԹՈՒՆՑԵԱՆ




Իսլամական գոռ վաշտերը կատաղի
Պաշարեցին մեր լեռները սոսկալի,
Մի՛ վհատիր քաջ Սասուն,
Քեզ համար չէ նորութիւն,
Մեր պապերից սովորել ենք
Մեռնիլ տղամարդի պէս,
Զոր մեզ թողին յիշատակ:

Շէնիկ, Սեմալ պաշարուած են քիւրտերով,
Տալւորիկի անցքն է փակուած թուրքերով,
Զքեզ տեսնեմ քաջ Մուրատ,
Սուրը շարժիր անվհատ,
Մեր հեռաւոր եղբայրներ
Չեն կենար միշտ անտարբեր,
Շուտով կուգան օգնութեան:

Թնդանօթի դէմ դրել ենք քաջ սրտով,
Սովի դիմադրել ենք կաթով, բանջարով,
Ի սէր Աստուծոյ դժուար է
Հըպատակիլ օտարին.
Լաւ է մեռնիլ առանց հացի
Քան յանձնուիլ ոսոխին,
Անգութ եւ անաստուածին:

Հայ աղջիկներ, առէ՛ք վառօդ ու կապար,
Լըցէ՛ք դատարկ փամփուշտները չարաչար,
Իսկ դուք կանայք անվհատ
Առէ՛ք սուր եւ հրացան,
Խրախուսեցէ՛ք հայ քաջեր,
Ազատենք մեր հայրենիք
Ձեր կանացի արիւնով:

# ՆՈՐ ԵՐԳ

## ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ, Ո՞ՒՄՆ ԵՍ ՍԻՐՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Moderato Խօսք՝ ՉԱՐԵՆՑԻ Երաժշտ. ՄԻՔ. ՄԻՐԶՈՅԵԱՆԻ



Սիրուն աղջիկ, ո՞ւմն ես սիրում աշխարհում,
Արարատեան ես մեր սիրուն աշխարհում:
— Քաղքից եկած ես էն տըղին եմ սիրում,
Կեպը դրած ես էն տըղին եմ սիրում,
Աչքերը շող ես էն տըղին եմ սիրում,
Մաշին քշող ես էն տըղին եմ սիրում:

Ընչի՞ համար դու չես սիրում էն տըղին,
Բոյը սիրուն, տեսքը սիրուն էն տըղին,
Յօնքը կիտած, բեխը սրած էն տըղին,
Գըլխին սեւ սեւ փափախ դրած էն տըղին,
Մաուզէրը կողքին կախած էն տըղին,
Մեր հանդերից հեռու փախած էն տըղին:

Ընչի՞ սիրեմ բեխերը ցից էն տըղին,
Հողը դնեմ աշխարհի ցեց էն տըղին,
Ձեռքը տռուզ, խելքը տռուզ էն տըղին,
Թալան տուող լիրբ ու հարուստ էն տըղին,
Մաուզէրին ձեռքը դրած էն տըղին,
Ըռանչպարի շիւան ու լաց էն տըղին:



# ՔԱՅԼԵՐԳ ՄԱՐՏԱԿԱՆ

Ձայնագրեց՝ Տ. ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ




Յառաջ ընթանանք, եղբայրնե՛ր,
Մարշի հրաւէր կարդալով,
Հայրենեաց ազատութիւնը
Գրենենք մեր սուրբ արիւնով:

Բաւ է որքան տառապեցանք,
Բաւ է որքան մենք լացինք,
Այսուհետեւ մարշի դաշտը
Կռուի տալով պիտ՝ մեռնինք:

# ԶՈՅԳ ԱՉԵՐ

Երաժշտ. Դ. ՂԱԶԱՐԵԱՆԻ

Andantino



Սեւ գիշեր էր, պարզ գիշեր էր,
Կը փայլէին շատ աստղեր.
Գիշերն զով էր գիշերն մեղմ էր,
Կը փնտռէի զոյգ աչեր:

Զեփիւռն մեղմիկ, հովերն անդորր,
Ննջած էին խոր քընով,
Առուն սիրուն, առուն մոլոր:
Կը հոսէր միշտ անխռով:

Ճամբես երկար, համբես անծայր,
Յոգնեցրեց իմ յոյսեր՝
Փնտռած եակ մի զոյգ աչեր
Չը գտայ ես ոչ մի տեղ:

Յոյսն իմ կըտրած չէի ես դեռ՝
Նայեցայ երերն ի վեր.
Աստղերն ըսին — ալ մի՛ երգեր՝
Զոյգ աչերն են մեր ընկեր:

# ՀՐԱՒԷՐ

## ՏԵՍԷՔ ԱՂԱՒՆԻՆ ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԻՆ

Ձայնագրեց՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆ



Տեսէք աղաւնին Նոյեան տապանին
Եկած ու կանգնած ի սար Տաւրոսին՝
Աւետիս կուտայ Հայկեան սերունդին,
Թէ եկաւ գարուն Թորգոմայ զարմին:

Արթնցէ՛ք Հայեր, քաջաց զաւակներ,
Առէք միութեան տէգ ու նիզակներ.
Շուտով կազմեցէք սիրոյ խմբակներ,
Հագէ՛ք քաջութեան զէն ու զրահներ:

Հինգ հարիւրամեայ մի քուն քնացանք,
Զ'Աստուած ու զեղբայր ի սպառ մոռացանք,
Սիրոյ, միութեան լաթեր մերկացանք,
Ատելութեան ձեռք խաղալիք դարձանք:

Մոռցանք հայրենիք, մոռցանք Հայաստան,
Կորուսինք մեր փառքն ու Արմենիստան,
Մաս մը Ռուսաստան, մաս մը Պարսկաստան,
Մնացինք թշուառ, անտէր, անպաշտպան:

Երկինք բարկացաւ, հայրենիք լացաւ,
Մեր ջուրն ու գինին մեզ արիւն դարձաւ,
Խաչեալըն Յիսուս մեզի մոռացաւ,
Հայերուն բաժին մնաց սուգ ու ցաւ:

Այսչափ քնանալ մեզի հերիք է,
Թմրիլն ու պառկիլ խիստ մեծ չարիք է.
Սիրելն ու սիրուիլ արդէն բարիք է,
Հայու զինուորին համար մեծ պարտք է:

Եկէք միանանք, բանանք դպրոցներ,
Մեր մատաղ մանկանց համար վարժոցներ,
Վառե՛նք, բորբոքենք սիրոյ հնոցներ,
Մեր սառած սրտին պլլան հալոցներ:

Շուքի պէս անցան այս հինգ մեծ դարեր,
Լացին հայրենեաց դաշտեր ու սարեր,
Հերիք ալ ձեզի, հերիք է, վաստեր,
Հերի՛ք մեր բաժին արցունք ու ախեր:



## ԿԱՐՕՏ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԳ



Ո՞վ անձկալիդ իմ հայրենիք,
Դու հեռաւոր իմ օրրան,
Աւերակներդ ու վարդենիք
Կը կանչեն զիս յաւիտեան:

Նրսեհիս մէջ քեզ կը տեսնեմ
Դահիճներու ոտնակոխ,
Նահատակներ զարհուրադէմ,
Կ'երգեն հոգւոյս վրէժ ու ոխ:

Քեզ կը կանչեմ ես ծովէ ծով,
Հայրենազուրկ ու վտար,
Քեզ գտնելու ջերմ երազով
Կը տոչորիմ անդադար:

Արիւնահոս իմ կարօտին
Ո՛վ դու բաժակ ու խրախոյս,
Ո՜ն, արդեօք ե՞րբ պիտի ցաթես
Իբրեւ ազատ արշալոյս:

## ՕՐՕՐ, ԲԱԼԱ՛ ՋԱՆ

Ձայնագրեց՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆ



Դա շապիկն է այն քաջ մարդուն, բալա՛ ջան,
Որ քեզի նա հայր էր կոչւում, օրօր, օրօր բալա՛ ջան:
Առաւօտեան ժամը եօթին, բալա՛ ջան,
Պատերազմում հայրդ սպանւեց, օրօր, օրօր բալա՛ ջան:
Նա զոհ գնաց վասի սրբին, բալա՛ ջան,
Դու հայրազուրկ՝ որբ մնացիր, օրօր, օրօր բալա՛ ջան:

Կաթըս քեզի կ'անեմ հալալ, բալա՛ ջան,
Երբ քաջի պէս կըռուել սովրիս, օրօր, օրօր բալա՛ ջան:
Դէ՛ն, մեծացիր, շուտ բոյ քաշիր, բալա՛ ջան,
Վասի արիւն խմել սովրիր, օրօր, օրօր բալա՛ ջան:
Վրէ՛ժ, վրէ՛ժ, չար ոսոխից. բալա՛ ջան,
Խանասորը քեզ կանչում է, օրօր, օրօր բալա՛ ջան:

## ՀԱՐԲԱԾ ՈՒՍԱՆՈՂԻՆ ԵՐԳԸ

### Ո՜Հ, Ի՜ՆՉ ՔԱՂՑՐ ԲԱՆ, ԸԼԼԱԼ ԿՈՆԾԱԲԱՆ




Ո՜հ, ի՜նչ քաղցր բան,
Ըլլալ կոնծաբան,
Կոնծել լաւ գինի,
Թափառիլ միշտ անբան:

Լարիթ թըմպըրա լա լա
Հա՛, հա՛, հա՛,
Լարիթ թըմպըրը լա լա
Հա՛, հա՛, հա՛,
Լարիթ թըմպըրը լա լա
Հա՛, հա՛, հա՛,
Լարիթ թըմպըրը լա լա
Հա՛, հա՛, հա՛:

Ո՜հ, ի՜նչ դառըն բան,
Ըլլալ բըղբաբան,
Տառուիլ միշտ փողը,
Գըլխին տալ սեւ հողը:

Լարիթ թըմպըրը լա լա
Հա՛, հա՛, հա՛,
Լարիթ թըմպըրը լա լա
Հա՛, հա՛, հա՛,
Լարիթ թըմպըրը լա լա
Հա՛, հա՛, հա՛,
Լարիթ թըմպըրը լա լա
Հա՛, հա՛, հա՛:

ԾԱՆՕԹ.— Միեւնոյն եղանակաւ կ՚երգուի նաեւ «Աշխոյժ նաւաստին» (Պար նաւաստեաց), որուն բառերը տուած ենք յաջորդ էջին տակը:



## ԼՈՒՐԻԿ

ԿԱՐԱ ՄՈՒՐԶԱ




Գացի արտեր՝ բըռնի լոր,
Քեզի տեսայ եայլի ձոր,
Կարմիր իր մանիր խընձոր,—
Լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Բախրեմ, լուրիկ, լուրիկ:

Կարմիր իր մանիր խընձոր,—
Լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Բախրեմ, լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Լուրիկ, լուրիկ, լուրիկ:

## ՊԱՐ ՆԱՒԱՍՏԵԱՑ

Աշխոյժ նաւաստին
Անվեհեր նակաս՝
Ընդդէմ փոթորկին,
Երգէ անփոյթ, զուարթ:
Լարիթ թիւմպէրէլէլլէ,
Հա՛, հա՛, հա՛:

Կոհակք փրփրադէզ
Չեն սոսկում, վախ մեզ,
Հողմունք սաստկահար
Գրգռեն մեզ ի պար:
Լարիթ թիւմպէրէլէլլէ,
Հա՛, հա՛, հա՛:

Օ՛ն, խըմենք զուարթ,
Գինին մինչ յատակ,
Օ՛ն, գրկենք զիրար,
Պարենք անդադար:
Լարիթ, թիւմպէրէլէլլէ,
Հա՛, հա՛, հա՛:

Լսեցէ՛ք, գիտցէ՛ք,
Մինչ մենք հոս եկած ենք,
Ահա ձերն՝ իւր ոտքերն,
Հոս հոն շուտ տանի փոյթ.
Լարիթ, թիւմպէրէլէլլէ,
Հա՛, հա՛, հա՛:

Ա՛յ, ա՛յ, ա՛յ պիտ՝ իյնայ,
Օ՛ն, բռնե՛նք, մեղք է մե՞ղք.
Հա՛, հա՛, հա՛, կը խնդայ,
Ամենքս ալ ծափ զարնենք:
Լարիթ, թիւմպէրէլէլլէ,
Հա՛, հա՛, հա՛:

Զանգակն ուժգնապիրկ
Կոչէ մեզ ի կարգ,
Վերջ տանք խնդութեան,
Քաշենք մեր պարան:
Լարիթ թիւմպէրէլէլլէ,
Հա՛, հա՛, հա՛:

## ՎԱՐԴ-ԿՕՇԻԿՍ

ԿԱՐԱ ՄՈՒՐԶԱ




Վարդ-կօշիկս, վարդ-կօշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս…

Մեր տան մէջը քընող տղայ,
Կարմիր խընձոր բաշխող տղայ,
Վարդ-կօշիկս գըտնող տղայ,
Տղա՛յ, դրկէ վարդ-կօշիկս:

Ձեր տան մէջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր բաշխել չեմ ես,
Վարդ-կօշիկդ գտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ-կօշիկդ:





## ԳԱՐՈՒՆ

Allegro Խօսք՝ Ն. ԶԱՐԵՆՑԻ Երաժշտ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ



Գարուն, գարուն Երեւանում,
Երեւանում ահա նորից,
Շնչում է խոր, բնդում անհուն
Մի խնդութիւն ոսկեւորիկ:

Ահա կանգնած իրար կողքի,
Աբովեանի երկայնքն ի վեր,
Լոյս են խմում գարնան շողքից,
Ու կանաչում ծառերը մերկ:

Յիշո՞ւմ ես, սիրտ, գարուն մի այլ,
Երբ տնկեցին ծառերն այս նոր,
Երբ մեր քոյրիկ մանկանց նըման,
Նրանք դեռ մերկ, նրանք տկլոր:

Տե՛ս՝ ինչպէ՞ս են ծաղկել հիմա,
Հասակ առել ու կանաչել.
Տե՛ս՝ ինչպէ՞ս են նրանք փթթել,
Մեր լուսեղէն մանկանց նըման:

# ՀԱՅԱՍՏԱՆ

## Ո՞ՐՆ Է ԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆ

Խօսք՝ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ձայնագրեց՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՅԵԱՆ




Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Մի՞թէ սա է՝ Ռուսաստան,
Որ իր բռնութեամբ գերել էր աշխարհ.
Ազգին կեանքն ալ էր յաւիտեան կորած:
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,
Մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Մի՞թէ սա է՝ Թուրքիստան,
Որ էր երբեմն Սոդոմ ու Գոմոր,
Ընտանի կեանքն էր Բաբելեան խրմոր:
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,
Մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Մի՞թէ սա է՝ Տաճկաստան,
Որ իւր փառքերն բնաւին զրկուած,
Կանանցի մէջ էր երբեմն թաղուած:
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,
Մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Մի՞թէ սա է՝ Ֆրանկիստան,
Որ իր նոխ զգեստօք սիրել է աշխարհ,
Լուսաւորութեամբ առաջինն է ան:
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,
Մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Ահա՛ սա է Հայաստան
Որ իր քաջութեամբ՝ հաւատն ու կրօն
Պահպանել է նա մինչեւ ի ցայսօր:
Հա՛, հա՛, հա՛, հա՛, ճիշդ է,
Մեր աշխարհն այս է:



# ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Ձայնագրեց՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՅԵԱՆ




Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելնենք,
Արօր, գութան մոռնանք, հրացան առնենք.
Ճնշուած մեր բողոքը յայտնենք զէնքերով
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով:
Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ճնշուած հայու որդիք հարազատ:

Բան քէ ամէն վայրկեան կենդանի մեռնիլ,
Ազատութեան վճռենք աներկիւղ զոհուիլ.
Փափուկ մահճում հանգիստ կեանքը վայել է
Ով որ հայրենիքում ազատ ապրում է:
Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ճնշուած հայու որդիք հարազատ:

Ստրկութեան շղթան խուլ շառաչում է
Ազատութեան ճնշուած ձայնը կոչում է.
Ազատ լեռներ թող մեզ լինին ապաստան
Եւ ընդարձակ ձորեր՝ ազատ գերեզման:
Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ճնշուած հայու որդիք հարազատ:

Առաջ գնանք, անվախ զարնենք թշնամին,
Փրկենք հայ գիւղացին հանենք վախուկեն.
Իմաց տանք վաշին անխիղճ բռնաւոր,
Ծագեց հայ հրոսակաց համար պայծառ օր:
Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ճնշուած հայու որդիք հարազատ:

Ցրուած խմբեր Հաճըն, Զէյթուն, Սուէտիա,
Շտապեն միանալ եւ կազմել գունդ հայկեան.
Հայի ազատութեան կանգնել մի դրօշակ,
Կեանքը մահով կապուած կանգնել նրա տակ:
Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ճնշուած հայու որդիք հարազատ:

## ՀՈՎՈՒԵՐԳ

## ՀՈՎԻՒԸ ՍԱՐՈՒՄ ՏԽՐԵՑ

Ձայնագրեց՝ Տ. ՁԷՅԹՈՒՆՑԵԱՆ




(Ձայնագրութեան շարունակութիւնը եւ բառերը տեսնել յաջորդ էջին վրայ)





Հովիւը սարում տխրեց,
Սիրոյ երգը նուագեց,
Երգը վառ աչերին,
Երգը վառ այտերին,
Երգը զուարթ օրերին,
Հինկա՛լ լա... հինկա՛լ լա...

Հէ՜յ, խեղճ հովիւ, քեզ բաժին,
Խոր ձորում մնացիր,
Երգը վառ աչերից,
Երգը վառ այտերից,
Երգը զուարթ օրերից:

Անա՛ կուգայ նոր գարուն
Ծաղիկներով զարդարուն,
Սիրում եմ գոյնզգոյն
Ծաղիկներ, հա՛, հա՛, հա՛,
Գոյնզգոյն ծաղիկներ,
Հինկա՛լ լա... հինկա՛լ լա...

Հ՜էյ, խեղճ հովիւ, քեզ բաժին,
Խոր ձորում մնացիր,
Երգը վառ աչերից,
Երգը վառ այտերից,
Երգը զուարթ օրերից:



## ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

### ԿՈՏՈՐԱԾՆ ԱՆԳՈՒԹ, ՀԱՅԵՐԸ ԹՈՂ ԼԱՆ

Adagio

Ձայնագրեց՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆ



Կոտորածն անգութ, Հայերը թող լան,
Անապատ դարձաւ շէն Ատանան,
Կրակը, սուրը ու անխիղճ թալան,
Ռուբէնի տունը, ա՜խ, ըրաւ վերան:

Անզգայ անօրէն վատը որբ թողուց
Զաւակը մօրմէն, հարսը իր փեսէն,
Ճեվատն անզգամ, Ատիլը գձուծ,
Կերան, կշտացան հայու արիւնէն:

Ալ մի՛ տար լոյսդ պայծառ արեգակ,
Լուսին, շուրջ կապէ դուն սուգի մանեակ.
Անցաւ մեր երկրէն հարաւի խորշակ,
Չորցուց, թռմեցուց ծառ, ծաղիկ համակ:

Պարապ է աւա՜ղ, հարուստ Ատանան,
Մոխիր է դարձեր ամբողջ Կիլիկիան,
Միայն ապրեցաւ Հանըրի սիրոյն,
Ինչո՞ւ չի շարժիր ապառաժ Զէյթուն:

Րոպէ մը չանցաւ ու հայոց խեղճեր
Ինկան սուրին տակ խուժանին անհեղ,
Ժամեր ու դպրոց բոցի մէջ կորան,
Բիւրաւոր հայեր անխնայ մեռան:

Երբ օր գիշեր կրակը մէջէն,
Թշնամւոյն սուրը, գնդակը դուսէն,
Ջնջեցին հայը երկրին երեսէն,
Արիւն կը վազէ մեր ջինջ գետերէն:

Ալ բաւ է որքան վատերուն լուծը
Կրեցինք, թողունք մեր լացն ու կոծը,
Օտարին տունը ալ չէ ապահով,
Հայ հողերու վրայ մեռնինք մենք փառքով:



## ԷՍ ՕՐ ՈՒՐԲԱԹ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Allegro



Էս օր ուրբաթ է պաս է,
Դէ՛, նէ՛, զը՛նգը, զը՛նգը,
Դէ՛ն, նէ՛, ջա՜ն:
Սըրտիկ արծաթէ թաս է,
Դէ՛, նէ՛, զը՛նգը, զը՛նգը,
Դէ՛ն, նէ՛, ջա՜ն:
Սըրտիկ, մալուլ մի՛ մընա,—
Աշխարհ մարդու չի մընա:

Ելել եմ ու ճար չունիմ,
Մեռնելու հընար չունիմ,
Սըրտիկ, մամուլ մի՛ մընա,—
Աշխարհ մարդու չի մընա:

Աշունն եկաւ ցողալեն,
Ծառի բըփեր դողալեն,
Սըրտիկ, մամուլ մի՛ մընա,—
Աշխարհ մարդու չի մընա:

Կռունկ կանչեց սարերուն,
Ղարիբ սըղէն երերուն,
Սըրտիկ, մալուլ մի՛ մընա,—
Աշխարհ մարդու չի մընա:

## ՋՈՒՐ ԿՈՒԳԱՅ

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Allegretto



Ջուր կուգայ վերին սարէն՝
Սարն ոլորելէն,
Կը թափի մարմար քարէն
Կաթ-կաթ ծորելէն:

## ՊԱՂ ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ

*Lento*



Պաղ աղբիւրի մօտ էր,
Տեսայ մի աղջիկ,
Ձեռին սափորն լցրած
Ջուրն էր անուշիկ:

Մայրիկ զարմանեցայ,
Սիրում եմ նրան,
Մի փոքրիկ ակնարկով
Արաւ ինձ նշան:

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԷՋԸ

### ԹԻԹԵՌ

Andante — Խօսք՝ Հ. ԱՂԱԲԱԲԻ — Երաժշ. ՀԱՅԿԱԿԱՆ



Թելիկ մելիկ մի բերեւ
Թռվռացող թիթեռ եմ,
Ունիմ երկու նաշխուն թեւ,
Ողջ աշխարհին ես տէր եմ:

Ամբողջ օրը իմ քէֆին,
Թռչկոտում եմ դես ու դէն,
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ:



# ԱԼԱԳԵԱԶ

## ԱԼԱԳԵԱԶ ԲԱՐՁՐ ՏԵՂ Ա

ԿԱՐԱ ՄՈՒՐԶԱ




(Ձայնագրութեան շարունակութիւնը եւ բառերը տեսնել յաջորդ էջին վրայ)



Ալագեազ բարձր տեղ ա, եա՛ր,
Ջուրը հիւանդի դեղ ա, եար,
Ես սիրեցի, վա՜յ, խալխը տարաւ,
Իմ անուշ եարը,
Ա՜խ թէ չառնեմ, վա՜յ, ես կը մեռնեմ,
Իմ ազիզ եարը:

Քեզի մեռնիմ, անուշ եա՛ր ջան,
Կարմիր խնձոր, լալ ու մարջան,
Նանի, նանի, նանի՛ ջան:
Նանու դարդեր սարերով է,
Նանի, նանի, նանի՛ ջան:
Էրւում եմ, վառւում եմ,—
Չեմ գընա, նանի ջան,
Նանի, նանի, նանի ջան, ջան:

## ՁԻՄ ՎԸԶԻ ՎԶՆՈՑ ԿԻՏԱՄ

Ձիմ վըզի վըզնոց կիտամ,
Դէ՛ խանա ծամբելն ի ծովէն,
— Լողուորի մէկ-լէ ես եմ,
Չեմ խանա ծամբելն ի ծովէն,
Եար ունիմ, եար ունիմ...
Եարսի եօթ ախպէր ունի:

Ձիմ սիրունի ծամեր կիտամ,
Դէ՛ խանա ծամբելն ի ծովէն.
— Լողուորի մէկ-լէ ես եմ,
Չեմ խանա ծամբելն ի ծովէն,
Եար ունիմ, եար ունիմ...
Եարսի եօթ ախպէր ունի:

Ձիմ կամար ունքեր կիտամ...
Ձիմ ֆինջան աչքեր կիտամ...
Ձիմ սիւտակ թուշ քէ կիտամ...
— Ձիմ չուխտակ աչիս վըրայ,
Ծամբելն խանեմ ի տամ քըզի,
Երբ կիտայ էն օրն Աստուած,
Որ երանիկ ի տան մըզի,
Եար ունիմ, եար ունիմ...
Եարսի եօթ ախպէր ունի:

(Այս երգին ձայնագրութիւնը տեսնել յաջորդ էջին վրայ)



## ՁԻՄ ՎԸԶԻ ՎԶՆՈՑ ԿԻՏԱՄ

ԿԱՐԱ ՄՈՒՐԶԱ




(Տեսնել բառերը նախորդ էջին վրայ)

# ՎՈՒՇ ՎՈՒՇ

Երաժշտ. ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԻԻ




(Ձայնագրութեան շարունակութիւնը եւ բառերը տեսնել յաջորդ էջին վրայ)





Վո՜ւշ, վո՜ւշ, վրէժի՜ս մի նար առէք,
Վո՜ւշ, վո՜ւշ, սրտէս փուշը հանէք.
Վո՜ւշ վուշալէ՜ն, Թըշ Թըշալէ՜ն,
Սիրտը կրծող, ցաւ կրակներ:

Փրփրադէզ ծովն է յուզում,
Ժեռ քարափի կուրծքը զարնում,
Զարդ ու փշուր, մեկեն դառնում,
Յուսակտուր՝ յետ նահանջում:

Իսկ ժեռ քարը անյայտ մտքի,
Յետից ընկած, ձեն չի հանում,
Վո՜ւշ վուշալէ՜ն, Թըշ Թըշալէ՜ն,
Ցաւ կրակներ, մրմկտալէն:

Փրփրադէզ ծովն է յուզում,
Լալ հառաչանք, աղերս թափում.
Ա՜խ, իմ սրտիս խորունկ վէրքեր
Ցաւն է կարում մրմռալէն:

Վէրքըն անո՜ւն, ցաւն անդարման,
Արիւն հոսում կըսկըծալեն.
Վո՜ւշ վո՜ւշ, վո՜ւշ վո՜ւշ,
Վո՜ւշ վո՜ւշ, վո՜ւշ վո՜ւշ, վո՜ւշ:



# ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐԵՐԳ

## ՏԷՐ ՀԱՅՐՆ ԱՅՍՕՐ ԿԱՐԴԱՑ ՊՍԱԿ

Խօսք՝ ՍՏԵՓԱՆ ՀԱՄԱՄՃԵԱՆԻ

Երաժշտ. Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆԻ
(Ժողովրդական մոտիվ)

Andantino



Տէր Հայրն այսօր կարդաց Պսակ,
Հարս ու փեսայ առին ճաշակ,
Ա՛լ թող չընեն իրար նազանք,
Մենք ննջելու պահին հասանք:
Խմե՛նք կենաց հարս ու փեսին,
Պարենք երգենք մենք միասին:

Տէր Հայրն այսօր օրհնեց Հալաւ,
Հարսը փեսին ձեռքը տուաւ,
Տուէ՛ք իրեն զէրտէ-փիլաւ,
Մեզ ննջելու պահը հասաւ:
Խմե՛նք կենաց հարս ու փեսին,
Պարենք երգենք մենք միասին:

Տէր Հայրն այսօր կապեց Նարօտ,
Հարսը փեսէն առաւ կարօտ,
Կեանքն առանձին չունի համ հոտ.
Հարս ու փեսայ թող գան մեզ մօտ:
Խմե՛նք կենաց հարս ու փեսին,
Պարենք երգենք մենք միասին:

Տէր Հօր ձեռքը բլլայ դալար,
Կնքահայրին վարձքը կատար,
Հարս ու փեսայ ապրի՛ն հազար,
Ուլունք կապեն չառնեն նազար:
Խմե՛նք կենաց հարս ու փեսին,
Պարենք երգենք մենք միասին:

Փեսան հասաւ իր մուրազին,
Ա՜լ թող հոսի անուշ գինին,
Կարգն է հիմա պար ու երգին,
Ուրա՜խ անցնին օրերն կեանքին:
Խմե՛նք կենաց հարս ու փեսին,
Պարենք երգենք մենք միասին:



# ԿԱՄԱՒՈՐԻ ԵՐԳ

## ՁՄԵՌՆ ԱՆՑԿԱՑԱՒ, ԳԱՐՈՒՆ Է ԱՐԴԷՆ

Ձայնագրեց՝ Տ. ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆ

Tempo di Marcia



Ձմեռն անցկացաւ, գարուն է արդէն,
Ծաղկունք բացուեցան, բլբուլք թող երգեն,
Հայոց քաջերին ժամն է հասանեաց,
Անեղ պատերազմի ձայնը որոտաց:
Զենքի շարժումէն թնդում է երկիր,
Հերոսք հայրենեաց օգնութեան հասէք:

Ծաղկեցան այգունք, ծաղկեցան դաշտեր,
Վրէժ գոռացին մեր հայ հերոսներ,
Լեռներ դողդողաց, ժայռեր պատառուեց,
Վաշ թշնամիներն ո՛ւր պիտի փախչին:
Զենքի շարժումէն թնդում է երկիր,
Հերոսք հայրենեաց օգնութեան հասէք:

Այսքան դարերու ծանր շղթաներ
Այժմ կը փշրեն հայ կամաւորներ,
Իսկ դու դաւաճան ո՞ւր պիտի փախչիս
Որ հայ կամաւորին սուրէն ազատիս:
Զենքի շարժումէն թնդում է երկիր,
Հերոսք հայրենեաց օգնութեան հասէք:

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԷՋԸ

### ԱՇՈՒՆ

Allegretto Խօսք՝ Հ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ Երաժշտ. Կ. ԿՈԼԵՆԻ



Դաշտ ու այգի
Դեղին հագան,
Ծառ ու ծաղիկ
Մերկացան:
Թռչունները
Երամ երամ
Մեր աշխարհից
Հեռացան:

Օրը մռայլ,
Ցուրտ ու տխուր,
Բարակ անձրեւն
Է մաղում:
Թռչունները
Երամ երամ
Մեր աշխարհից
Հեռացան:

Մէգն է պատել
Սար ու բլուր,
Էլ մարդ չըկայ
Դաշտերում:
Թռչունները
Երամ երամ
Մեր աշխարհից
Հեռացան:

ՎԵՐՋ Գ. ԳԻՐՔԻՆ

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

«ԳԱՆՁԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ» անզուգական երգարանին Գ. Գիրքը կը լրանայ ներկայ 45րդ պրակով:

Նկատի ունենալով այն խանդավառ համակրանքը որ ստեղծուած է ազգային բոլոր շրջանակներուն մէջ մեր «Գանձարան»ին հանդէպ, ինչպէս նաեւ զանազան պարբերաթերթերու մէջ երեւցած գնահատական տողերը՝ ի մասին սոյն աննախընթաց գործին, Վարչութիւնս է՛լ աւելի քաջալերուած՝ գործը անթերի ներկայացնելու մտօք՝ դիմում ըրաւ յայտնի հայ երաժշտագէտներու եւս, իրենց օժանդակութիւնը ձեռք բերելու նպատակաւ:

Ուրախ ենք որ մեր դիմումները պսակուեցան յիշեալ ծանօթ երաժշտագէտներու կողմէ մեզ տրուած հաւաստիքներով՝ որով սիրայօժար իրենց օժանդակութիւնը կը տրամադրեն մեր «Գանձարան»ին: Եւ մենք, այս պայմաններուն տակ, առիթը պիտի ունենանք գոհացնելու մեր երաժշտասէր հասարակութեան ճաշակը՝ յաջորդ պրակներով [illegible] իրեն հրամցնելով հայ երաժշտութեան լաւագոյն գործերը, ինչպէս նաեւ Հայաստանեան նոր երգեր.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՈՍԿԵՏԱՌ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ

ԱՄԷՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ Է “ՈՍԿԵՏԱՌ ՄԱՏԵՆԱՇԱՐ„ԻՆ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Tous droits de reproduction réservés
à VOSGUEDAR MADÉNACHAR
pour tous pays

# ԵՐԳԱՑԱՆԿ Ա., Բ. ԵՒ Գ. ԳԻՐՔԵՐՈՒ

### Ա

Էջ
1. Ազատութեան այն վառ սէրը 132
2. Ազատն Աստուած այն օրից 113
3. Ազնիւ ընկեր մեռանում եմ 31
4. Ալագեազ բարձր տեղ ա եար 361
5. Ալագեազ բարձր սար ա 32
6. Ալ այլուղս կորաւ ձեր դուռ 76
7. Ալ ու ալուան ես հագել 134
8. Ա՜խ իմ ճամբէն մոլոր գնաց 55
9. Ա՜խ Անուշ Անուշ էդ ի՞նչ ես ասում (Անուշ) 119
10. Ախ էնիմ արուն կուգայ 205
11. Ա՜խ մարալ ջան, կոկոնս բռնած մնաց 215
12. Ախ իմ կաքաւիկ, նաշխուն սիրունիկ 282
13. Ակոռիի մեծ կարասին բոլորտիքն են 236
14. Ահա ելաւ լուսինն ար՝ափ 95
15. Ահա ծագեց կարմիր արեւ 155
16. Աղջի անաստուած, նստիր վրանում (Անուշ) 22
17. Աղջի բախտաւոր (Անուշ) 71
18. Աղջկերք պար բռնեցէք 168
19. Աղջի Հոռոմ, Հոռոմել ա եարս 123
20. Աղուորս, ըսի ծառին 256
21. Աղուոր օրեր իմ մանկութեան 136
22. Աղուորներուն համար Տէր իմ 281
23. Ամպել ա, ձուն չի գալի, շողե՜ր ջան 74
24. Ամպի տակից ջուր է գալիս (Անուշ) 63
25. Ամէն հայի սրտից բղխած 277
26. Այ աղջիկ, ծամով աղջիկ 176
27. Այգուն այգուն իմ խցկի մօտ 146
28. Այդ ի՞նչ է քո դարտը (Արշին մալ ալան) 55
29. Այս դուռը դեռ անառիկ է 190
30. Այ կաքաւիկ, սեւ կաքաւիկ 109
31. Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան 37
32. Այ վարդ լսիր աղաչանքիս 49
33. Ա՛յ Քէօրօղլի, ջա՛ն Քէօրօղլի 150
34. Անձրեւն եկաւ շաղալէն 68
35. Անի քաղաք նստեր կուլայ 140
36. Աշխարհի սկիզբից էսպէս է կնիկը 234
37. Աշխոյժ նաւաստին 351
38. Առաւօտ լուսոյ արեգակն արդար 29
39. Առաւօտուն փչեց հով 104
40. Առաւօտուն բարի լուս 324
41. Առտու եղաւ հաւբակին 152
42. Ասում են ուռին (Անուշ) 111
43. Ասում են ուռին (Անուշ) (Երաժշտ. Լիպարիտ Նազարեանցի) 302
44. Արագիլ բարով եկար 56
45. Արեւ բացուեց մութ ամպերէն 12
46. Արեւն ելաւ Զէյթունցիներ 105
47. Արեւ ըլլամ ծաքիմ մարիմ 257
48. Արեւը նոր ծագել ա 234
49. Արեւի շողին տակ տեսայ 127
50. Արեւի պէս սիրուն Զարօս 102
51. Արի բլբուլ մեկտեղ նստինք 158
52. Արի երգիր սիրուն բլբուլ 91
53. Արի գութան վարի գութան 306
54. Արի իմ սոխակ թող պարտէզ մերին 58
55. Արիք Հայկազունք յառաջ ընթանանք 65
56. Արիք որ երթանք 247
57. Արշալոյսը նորէն բացուաւ 87
58. Արշին մալչի, մալ ցոյց տուր (Արշին մալ ալան) 192
59. Աւետի՛ս Հայեր, ալ սուգը մէկդի 265
60. Աքաղաղին հետ միշտ արթուն 208

### Բ

61. Բամ փորոտան 3
62. Բան եմ ասում ականջ դիր (Սօս եւ Վարդիթեր) 220
63. Բարի գեղեցիկ առաքինի ընկերը 303
64. Բարի լոյսի զանգեր զարկին 56
65. Բարի հրեշտակ մ'այս առաւօտ 344
66. Բարձր սարեր, այ սարեր (Անուշ) 226
67. Բարով եկար սիրուն կռունկ 125
68. Բերդիցը դուրս ելայ, Ալագեազ տեսայ 98
69. Բէկի աղջիկը երեւի սա է (Արշին մալ ալան) 167
70. Բլբուլի հիդ լաց իս էլի (Սայաթ-Նովա) 147

### Գ

71. Գանձեր ունիմ անտակ անձեր 278
72. Գարահիսար լերան կրծքին 318
73. Գարնան գութան հանեցի 59
74. Գարուն ա ձուն ա արել 128
75. Գարուն, գարուն Երեւանում 353

Էջ

76. Գացէք տեսէք ո՞վ է կերել գէձ 337
77. Գացի արտեր բռնի լոր 351
78. Գեղեցիկ հոտաւէտ (Վայրի ծաղիկ) 226
79. Գետակի վրայ թեքուել է ուռին 75
80. Գերեզմանիս թող արձանին վրայ 342
81. Գիւղական աղջիկ եմ ես 237
82. Գնա՛, գնա՛, ոտիդ եմ, հա, հա, հա 174
83. Գնա՛ց, գնա՛ց, սիրունիս գնաց 187
84. Գնչու աղջիկ դու սեւաչեայ 314
85. Գովեա Երուսաղէմ զՏէր 38

## Դ

86. Դամբը ձեռիս աշխատում եմ (Պէպօ) 40
87. Դաշնակց. խումբ գնանք մենք Սասուն 191
88. Դաշտ ու այգի դեղին հագան 368
89. Դարդս լացէ՛ք սարի ամբուլ 41
90. Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին 86
91. Դիլբար ջան, Դիլբար ջան 251
92. Դու զո՞վ խնդրես մայր իմ անուշ 161
93. Դու խօսք տուիր ինձանից չը զատուելու 51
94. Դուն ելեր ես սարն ի Սէյրան 186
95. Դուն էն գլխէն իմաստուն իս (Սայաթ-Նովա) 8
96. Դու չես հաւատում որ քեզ եմ սիրում 141

## Ե

97. Եարօ ջան, դուն Մասիսի սարն ես 83
98. Երբ կամինք փրկել թշուառ հայրենիք 225
99. Եկէք մենք հպարտ քայլենք կեանքին մէջ 336
100. Եկէք քոյրեր սեգ սարերի (Անուշ) 19
101. Եկել է գարուն սոխակը սիրուն 50
102. Եկ իմ սրինգ իմ բարեկամ տրտագին 118
103. Եկուր իմ աղուոր, այս գիշեր հով կայ 151
104. Ես ապրում էի մի փոքրիկ տան մէջ 342
105. Ես բլբուլ եմ, մի բուն ունեմ 280
106. Ես իմ աշխարհի գարունը կ'ուզեմ 311
107. Ես լսեցի մի անուշ ձայն 66
108. Ես նուռ եմ, սիրով հուր եմ 270
109. Ես սարէն կուգայի 198
110. Ես սիրել եմ մի զոյգ աչեր 64
111. Ես սիրում եմ բուռն թափով 100
112. Ես սիրեցի բայց ոչ ոք 273
113. Ես սիրում եմ կարմիր արեւ 293
114. Ես Սվազցի մըն եմ փոքրիկ 240
115. Ես քու ղիմէթըն չիմ գիտի (Սայ. Նով.) 42
116. Երբ ալեկոծ ծովուն վրայ 67
117. Երբոր բացուին դռներն յուսոյ 39
118. Երեւան բաղ եմ առել 329
119. Երկինքն ամպել է 72

## Զ

120. Զարթիր որդեակ յուշ բեր, վեր կաց 60
121. Զէյթուն անկախ դու աշխարհիկ 117
122. Զիմ վըզի վըզնոց կիտամ 363
123. Զինչ ու զինչ տամ լողուորչուն 198
124. Զինուոր ենք Ռամկավար եւ Ազգս 28

## Է

125. Էն սեւ գիշերում, տուման դարտերի 321
126. Էն ով էր նանի (Անուշ) 46
127. Էնքան սիրուն ու գիտուն ես 142
128. Էս առուն ջուր է գալի 235
129. Էս գիշեր լուսը տեսայ, երի երի ջան 149
130. Էս եանը բոստան, էն եանը բոստան 68
131. Էս օր մեր Տէրտէր զիկ ասաց 339
132. Էս օր նորը նորել է 333
133. Էս օր ուրբաթ է պաս է 359

## Ը

134. Ընդ աստեղօք օտար ափանց 113

## Թ

135. Թառամեցաւ կարմիր վարդը (Սօս եւ Վարդիթեր) 243
136. Թելիկ մելիկ մի թիթեռ 360
137. Թէ զիս կանչեն օտարաց 343
138. Թէ թեւ ունէի ոն կը թռչէի 145
139. Թէ իմս հայրենեաց քնար սգաւոր 71
140. Թէ հայրենեաց պսակադիր 310
141. Թէ նապաստակ մ'ըլլայի ես 224
142. Թէքսթիլի Ֆապրիքում մինչեւ իրիկուն 7
143. Թիկունքդ լայն, թեւերդ ուժգին 110
144. Թող չերգէ պլպուլ Մշոյ դաշտերում 78
145. Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս 231
146. Թրա լա լա, պուպրիկն անա 271

## Ի

147. Ի բիւր ձայնից բնութեան շքեղ 137
148. Իբրեւ արծիւ սաւառնում ես 81



Էջ

149. Ի զէն հայեր, ի սուր եւ ի հրացան 57
150. Իմ գլխու Ֆութէն կիտամ 63
151. Իմ հայրենեաց հոգի Վարդան 218
152. Իմ սիրելի զաւակունքս 121
153. Իմ չինարի եարը 11
154. Ինձ որ հարցնէք, կնկայ հետ (Ուշ լինի նուշ լինի) 116
155. Ինչ կօնիմ հէքիմըն (Սայաթ-Նովա) 84
156. Ինչու ապշած ես լճակ 156
157. Ինչու Բինգէօլը մտար 195
158. Իսլամական զոռ վաշտերը կատաղի 345

## Լ

159. Լէ լէ լէ լէ Թամզարա 233
160. Լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ 135
161. Լըճի մէջ նաւակը 73
162. Լոյսը բացուեց գնամ արտը 267
163. Լորիների տակ մըտորում եմ լուռ 309
164. Լուսին ելաւ ան սարէն 283
165. Լուսնակն անուշ, հովն անուշ 174
166. Լռեց: Ամպերը եկան ծածկեցին 182
167. Լօ, լօ, լօ, սեգ Սիփանայ սարի վրայ 249

## Խ

168. Խաղաղ դաշտի որդիք 355
169. Խաւարել եմ որպես գիշեր 315
170. Խնձորի ծառի տակին 62
171. Խումար պառկե՛ երես բաց 160

## Ծ

172. Ծագեց արեւ ազատութեան 181
173. Ծաղիկ էի նորաբողբոջ 284
174. Ծաղկոց մտայ, սիրտս էրուած 35
175. Ծառիս տակը մանիշակ (Համբարձման Վիճակի երգ) 89
176. Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան 9
177. Ծիծեռնակը բոյն կը շինէ 94
178. Ծիրանի ծառ, բար մի տա 262
179. Ծլել է արտս, ծփում է արտս 20
180. Ծխէ, ծխէ, ով բուխուրիկ հայրենի 275
181. Ծովը յոգնած փրփուր բերնին 94 եւ 220
182. Ծովուն խաւք մը կէր 244

## Կ

183. Կանչէ կռունկ, կանչէ, քանի գարուն է 202
184. Կարկուտ տեղաց Խանասորայ 163
185. Կարմիր գինի, անուշ գինի 101
186. Կարմիր գինով եղեր եմ գինով 300
187. Կաքաւ թռաւ բարձր քարին 292
188. Կէս գիշեր էր, պարզ գիշեր էր 347
189. Կը հոսիս զուարթ առուակ 268
190. Կողբայ ելան սէլերը 85
191. Կոմսոմոլ էն տղէն, աչքս վրէն մնաց 70
192. Կովկասի քաջեր խմբեր կազմեցէք 197
193. Կոտորածն անգութ հայերը թող լան 358
194. Կուժն առայ ելայ սարը 35
195. Կռուեցէք տղերք, կռուեցէք քաջ քաջ 159
196. Կռունկ ուստի կուգաս, ծառայ եմ 82
197. Կռամբամբուլին այն օղին է 214

## Հ

198. Հաբրբան, ջան է ջան 53
199. Հա կը սուլէ նեպըրնըաց 216
200. Համբարձումն եկաւ, ծաղկունքը (Անուշ) 36
201. Հայ ապրինք եղբարք մարդկութեան 177
202. Հայաստան երկիր դրախտավայր 6
203. Հայաստանից եկած զինուոր 227
204. Հայ երիտասարդք շուտ շտապեցէք 254
205. Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ 126
206. Հայրենեաց սիրոյ համար 102
207. Հայրենիք արքազան իմ սիրուն 110
208. Հայրենի աղբիւր երգերս վճիտ 294
209. Հայրիկ հայրիկ քո հայրենիք 178
210. Հանգչեցէք դուք անդորր 289
211. Հանդէն գաս գեղը մտնես 183
212. Հաւատացիր ինձ Ասկեար ջան (Արշին մալ ալան) 58
213. Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ 26
214. Հերիք հերիք աշխատանք 144
215. Հերիք որդեակք այսքան տառուան 108
216. Հերիք է մայրիկ դու ինձ փայփայես 201
217. Հերոս մռնչեց, Սուլթան դողդողաց 323
218. Հէյ ջան, էյ ջան, լանջեր մարջան 223
219. Հէյ ջան տղերք Մասիս սարի 320
220. Հիմի՞ էլ լռենք եղբարք 13
221. Հլէ ինձ համար մարալ ես (Արշին մալ ալան) 246
222. Հով արէք սարեր ջան, հով արէք 194

Էջ

223. Հովերն առան սար ու դարեր 221
224. Հովիւը սարում տխրեց 356
225. Հով, հով, հով լինի 330
226. Հրեշտակ զուարթուն (Աղօթք երեկ.) 77
227. Հրեն մեր հանդում 61
228. Հօ երդում կ'անեմ (Սօս եւ Վարդիթեր) 259
229. Հօ ջան եզներ, ջան ջան եզներ 301
230. Հօ, ռօլ, օ, լօ, լօ, լօ (Կալերգ) 305
231. Հօլ արա, եզօ՛ (Սայլերգ) 307
232. Հօյ Հելինէ, Հելինէ եարը 78
233. Հօյ Նազան իմ Նազան իմ 47
234. Հօյ նար, ծամեր ունիս ծիրանի 248

## Ձ

235. Ձայն տուր ով ծովակ, ինչո՞ւ լռում ես 189
236. Ձիգ տուր քաշի այ եզը 122
237. Ձմեռն անցաւ եկաւ գարուն 164
238. Ձմեռը անցաւ եկաւ նոր գարուն 308
239. Ձմեռն անցկացաւ գարուն է արդէն 367

## Մ

240. Մայր Արաքսի ափերով 44
241. Մայրիներու անտառն ի վար 335
242. Մանիշակ եմ ես քաղել (Սօս եւ Վարդիթեր) 96
243. Մանիր մանիր իմ ճախարակ 120
244. Մաշտի Իպաս դու մեր տունը 99
245. Մարմար քարեն կըլկըլալեն 139
246. Մենք ենք ազատ, ուրախ ու կայտառ 296
247. Մենք հասանք մեր նպատակին (Արևին մալ ալան) 143
248. Մենք պէտք է կռուենք եւ ոչ լաց լինենք 90
249. Մեր դաշտերում ինչքան վարդեր 258
250. Մեր դրանը խնկի ծառ, գիւլում ջան 34
251. Մեր հայրենիք թշուառ անտէր 17
252. Մէ խօսք ունեմ իլթիմազով (Սայաթ-Նովա) 114
253. Մէկ ձի առայ աշխարհ ընկայ (Արևին մալ ալան) 80
254. Մի երգեր իմ սոխակ 301
255. Մի լար բլբուլ, քեզ մի տանջիր 103
256. Մի լար մարիկ, մի լար 297
257. Մի լար, մի թացիր աչերդ 212
258. Մնացես բարեաւ, ինչպես թողում քեզ 207
259. Մշակ բանւոր, ռենչպեր ախպեր 27
260. Մութը կոխեց ազնիւ ծաղիկ 312
261. Մտաւ արեւ երջանկութեան 185

## Յ

262. Յամսավերջն Ապրիլի զպատուհան 116
263. Յառաջ ընթանանք եղբայրներ 347
264. Յառաջ Հ. Մ. Ը. Մ.ի սկաուտներ 166
265. Յառաջ նահատակ ցեղի անմահներ 217

## Ն

266. Նայեաց սիրով Հայրդ գթած 242
267. Նանի, բալա, նանի նանի 341
268. Ննջիր մանկիկ իմ սիրասուն (Օրօր) 320
269. Նորաստեղծեալ բանն յանէից 228
270. Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի 165
271. Նպատակիս գէթ մի մասը 199

## Շ

272. Շաւարշանի հերոսներուն 153
273. Շորորա, Անուշ ջան, շորորա 222
274. Շուշօն ելաւ կ'երթէր էգին 299

## Ո

275. Ոլոր մոլոր Կուրն էր գալիս 210
276. Ո՜հ ինչ անուշ եւ ինչպես զով 169
277. Ո՛հ ինչ քաղցր բան, ըլլալ կոնծաբան 350
278. Ողջոյն տուէք իմ հայրենեաց 69
279. Ով անձկալիդ իմ հայրենիք 349
280. Ով դու բարեկամ այրած սրտերու 23
281. Ով Հայոց Աստուած 124
282. Ով մեծասքանչ դու լեզու 129
283. Ով որ քաջ է ի՞նչ կը սպասէ 229
284. Որ դու ելնես խերանց խըռով 328
285. Ո՞րն է աշխարհ Հայաստան 354
286. Որսկան ախպեր սարեն կուգաս 148
287. Ո՞րտեղից պատահեց, Աստուած իմ (Արևին մալ ալան) 88
288. Ուստի՞ կուգաս ղարիբ բլբուլ (Սայաթ-Նովա) 52
289. Ուրախ կեանքի շէն օրեր 287
290. Ուրկէ՞ կուգաս բուրդ փափուկ 184

## Չ

291. Չարբրրըս գլխիս ծածկեմ (Արևին մալ) 40
292. Չինար ես կեռանալ մի եար եար 254
293. Չիս ասում թէ լա՞ց իս էլի (Սայ.Նով.) 180



Էջ

## Պ

294. Պալատից դուրս եկաւ մի կոյս (Աշուղ Ղարիբ) 133
295. Պալքօնը ման ես գալի 239
296. Պաղ աղբիւրի մօտ էր 360
297. Պարզ իր աղբիւր, քրդի տղին ջուր տանեմ 319
298. Պարտէզին շուքերն երկար 340
299. Պէկզատու աղջիկ, տնէն դուրս արի 86
300. Պիլատի պիլատի (Եգիպտ. Քայլերգ) 25
301. Պիլիպի, նիփ Պիլիպի 241

## Ջ

302. Ջաղացպանուհի խեղճ կին 263
303. Ջանըս մրմուռ, սիրտս փշուր 79
304. Ջուր կուգայ վերին սարեն 359

## Ս

305. Սարերը հովել ա, Ծիրան ջան 166
306. Սարերը են ծաղկեր (Շուշան) 304
307. Սարերը ման եմ եկել 260
308. Սարերի հովին մեռնեմ 204
309. Սարերի վըրով գնաց եար եար 142
310. Սարը սարի նման չէ 206
311. Սարէն ելաւ երկու մուխ 171
312. Սարէն կուգայ ձիաւոր, վայ լէ լէ լէ 134
313. Սեւ խաւարը իմ ընկերս է անբաժան 172
314. Սեւ մութ ամպեր ճակտիդ դիզւան 326
315. Սեւ սեւ աչեր գեղեցիկ (Արևին մալ ալան) 255
316. Սիրեցի եարըս տարան 23
317. Սիրուհիս քեզ համար 230
318. Սիրուն աղջիկ ի՞նչ ես լալիս (Անուշ) 213
319. Սիրուն աղջիկ ո՞ւմն ես սիրում 346
320. Սիրուն աստղեր, նուր աչիկներ 286
321. Սիրուն գարուն, կանանչ գարուն 157
322. Սիրուն մանուշակ ինչո՞ւ ես թռամել 48
323. Սիրտս նման է են փլած տներ 193
324. Սոնա եար, Սոնա եար 175
325. Սովորելով փորձուեցի (Արևին մալ ալան) 238
326. Սուրբ տենչերով լոկ ծարաւած 170

## Վ

327. Վանդակիկ մը դրի աղուոր 246
328. Վարդ կօշիկս 352
329. Վերջին վարդ, վերջին վարդ 334
330. Վերքերով լի ջան Ֆէտայ եմ 93
331. Վըտակը ժայռից ներքեւ է թռչում 331
332. Վուշ, վուշ Անուշ (Անուշ) 19
333. Վուշ, վուշ, վշտիս մի նար արէք 364

## Տ

334. Տալւորիկի զաւակ եմ ղորդ 14
335. Տարածեալ ձեռք ընդ ձեռաց 154
336. Տեսէք աղաւնին Նոյեան տապանին 348
337. Տէր կեցո՛ դու զՀայս 97
338. Տէր կեցո՛ զՀայաստան 209
339. Տէր Հայրն այսօր կարդաց Պասկ 366
340. Տէր ողորմեա Հայոց ազգին 219
341. Տէր ողորմեա, Տէր ողորմեա 92
342. Տըլէ եաման, արեւն առեր 322
343. Տիլպար ջան 291
344. Տղաք ուրախ ըլլանք միշտ 232
345. Տո՛ւյ, տո՛ւյ, տո ւյ, տո՛ւյ 211
346. Տրակտորիստ տղին մի տես 45

## Ց

347. Ցաւեր, հոգեր ու դառն վիշտեր 269
348. Ցուրտը փչեց ձմեռ սաստիկ 131

## Փ

349. Փափուրի ջան (Պարերգ) 115
350. Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ 43

## Ք

351. Քանի վուր ջան իմ եար (Սայ.Նով.) 203
352. Քեա սեւ սեւաւոր աղջիկ 316
353. Քեզ եմ մնում անուշ գարուն 196
354. Քելէ, քելէ, քելքիդ մեռնեմ 20
355. Քեռին եկաւ մեր բակը (Տի լու լու) 303
356. Քելեր, ցոլեր իմ եարը 200
357. Քնիր անուշ սիրուն բալա 188
358. Քնիր իմ բալիկ օրօր իշ արա 295
359. Քնիր իմ սիրուն հրեշտակ 332
360. Քուն եղիր պալաս, աչերդ խուփ արա 21
361. Քրդի աղջիկ կայնի խաղա 327

## Օ

362. Օդն է զով, գիշերն է աղուոր 245
363. Օ՛ն թող զարնենք քնար, հնչեցնենք շեփոր (Պօղոս Փաշա Նուպարի) 313
364. Օրն էր ուրբաթ, լոյս ի շաբաթ (Մոկաց Միրզէ) 179
365. Օրօր, բալա ջան (Դա շապիկն է) 349

# ՎՐԻՊԱԿՆԵՐ

Մեր ընթերցողներէն կը խնդրենք ուղղել հետեւեալ վրիպակները, զորս կը գտնենք շատ կարեւոր: Ասոնցմէ զատ գրութեան ատեն սպրդած են կարգ մը աննշան վրիպակներ, որոնք շատ հասկնալի ըլլալուն պատճառաւ զանց կ'առնենք:

Հոս կուտանք նշումները միայն, առանց կրկնելու վրիպակները.—

| ԷՋ | ՏՈՂ | ՄԸՋԻԻՌ | |
|---|---|---|---|
| 6 | 5 | 4 |  |
| 26 | 1 | 2 |  |
| 27 | 1 | 1 |  |
| 32 | 2 | 2 |  |
| 143 | 1 | 1 |  |
| 143 | 1 | 2 |  |
| 151 | վերջին | 2 |  |



| ԷՋ | ՏՈՂ | ՄԸՋԻԻՌ | |
|---|---|---|---|
| 283 | 4 | 1 |  |
| 284 | վերջին | 2 |  |
| 289 | 4 | 2 եւ 3 |  |
| 289 | 7 | 2 |  |
| 290 | 8 | 2 |  |
| 297 | 6 | |  |
| 302 | 7 | 1 |  |
| 303 | 2 | 1 5րդ բախում |  |
| 304 | 4 | 4 եւ 5 |  |

| ԷՋ | ՏՈՂ | ՄՐՋԻՒՈՒ | |
|---|---|---|---|
| 307 | 6 | 4 |  |
| 310 | 3 | վերջին |  |
| 316 | 9 | 3 |  |
| 318 | | |  |
| 326 | 2 | 1 |  |
| 326 | 3 | 2 |  |
| 344 | 1 | 4 |  |
| 344 | 3 | 3 |  |
| 358 | 1 | 1 |  |

ՀՀ Ազգային գրադարան
NL0464954

## ԳԻՆ

Եգիպտոսի համար . . . 25 Ե. Դ.

Անգլիայի համար . . 6 ՇԻԼԻՆ

Ամերիկայի համար . . . 1.50 ՏՈԼԱՐ

ՏՊԱՐԱՆ "ՈՍԿԵՏԱՌ,,
Հասցէ.— Imp. VOSGUEDAR, Rue Galal, Le Caire, Egypte.